

Ազգային Ժողովի

**քաղաքական ուժերի օրենսդրական գործունեության
մոնիտորինգ**

Սույն ուսումնասիրությունը և հրապարակումը ֆինանսավորվել են Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի կողմից

Ե Ր Ե Վ Ա Ն 2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ..... 5

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ.....12

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ «ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ24

ԼՐԱՅՈՒՄՆԵՐ «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈԼՎԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՍԱՆ, ՊԱՀՊԱՆՍԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՍԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ31

ՀԱՐԿԱՅԻՆ ՓԱԹԵԹ39

ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ «ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ45

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՀՀ ՕՐԵՆՍԳԻՐ, ԳՈՐԾԱԳԻՐ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՍԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ51

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ՍԵՋ.....57

2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՐՏԻ 1-2-իմ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 68

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԿԱՄ ԼԱՎԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԼԱՎԱՏԵՍ ԸՆՏՐՈՂԻ ՀԱՍԱՐ72

Կուսակցությունների քաղաքական ծրագրերը, որպես կանոն, ուշադրության կենտրոնում հայտնվում են նախընտրական շրջաններում: Դրանց ավարտից հետո ծրագրերը երկրորդային են դառնում նույնքան արագ, որքան արագ հայտնվել էին քննարկումների կենտրոնում: Կուսակցությունների կողմից ծրագրերը հիշատակվում են միայն «հարմար» դեպքերի առիթով, «հարմար» պահերին, հասարակությունն իր հերթին հետևողական չի գտնվում կամ չի գտնում ծրագրերի իրագործման գործընթացին հետևելու, այն վերահսկելու արդյունավետ միջոցները:

«ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժերի օրենսդրական գործունեության մոնիտորինգ» ծրագիրը շարունակել է դիտարկել Ազգային Ժողովում ներկայացված հինգ քաղաքական ուժերի օրենսդրական գործունեությունը՝ փորձելով նման մի միջոց դառնալ հանրության համար: Նույն խնդիրների ու նպատակների շրջանակում՝ սա ծրագրի երկրորդ զեկույցն է: Առաջինը ներկայացվել է նոր գումարման Ազգային Ժողովի առաջին երկու նստաշրջանների դիտարկման արդյունքում: Այս փուլում դիտարկման առարկա են դարձել չորրորդ գումարման Ազգային Ժողովի 2008թ. աշնանային ու 2009 թ. գարնանային նստաշրջանի աշխատանքները: Խմբակցությունների օրենսդրական գործունեությունը դիտարկվել է նախընտրական ծրագրերի հետ համադրելու տեսանկյունից:

Ծրագիրն իրականացվել է լրագրողական և փորձագիտական խմբերի համագործակցությամբ: Լրագրողական խումբը, հետևելով ԱԺ աշնանային նստաշրջանի աշխատանքներին, պատրաստել է մոնիտորինգի առարկա դարձած օրինագծերին վերաբերող տեղեկատվությունը, ներկայացրել խմբակցությունների՝ ԱԺ քննարկումների ընթացքում հնչեցրած դիրքորոշումները ու համադրել դրանք ծրագրային մոտեցումների հետ: Փորձագետների խումբը մասնագիտական վերլուծություն է ներկայացրել նախագծերի վերաբերյալ:

Մոնիտորինգի առարկա դարձած օրինագծերից յուրաքանչյուրին վերաբերող տեղեկատվությունը ներկայացվել է նույն կառուցվածքի մեջ՝ երկու հիմնական բաժիններով: Առաջին բաժնում տրվել է օրինագծին վերաբերող հիմնական տեղեկատվությունը, ներկայացվել են դիրքորոշումները, որոնցով խորհրդարանական խմբակցությունները պաշտպանել կամ մերժել են օրենսդրական նախաձեռնությունը: Դրանք համադրվել են այն մոտեցումների հետ, որոնք տեղ են գտել նախընտրական ծրագրերում: Երկրորդ բաժնում տրվել են համապատասխան ոլորտում մասնագիտացած, անկախ փորձագետների վերլուծությունները մոնիտորինգի առարկա դարձած օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ:

Մոնիտորինգի առարկա են դարձել ԱԺ երկու նստաշրջանների ընթացքում քննարկված մեկ տասնյակ օրինագծեր: Դրանց ընտրությունը պայմանավորվել է ինչպես հնարավորինս տարբեր ոլորտներ ներառելու, այնպես էլ առանձին քննարկումների և քվեարկությունների ուշագրավությունը հաշվի առնելու մոտեցումներով: Դիտարկման առարկա դարձած օրինագծերը առնչվում են մի քանի հիմնարար ոլորտների՝ դատաիրավական ու հարկային բարեփոխումներ,

բնապահպանական խնդիրներ և քաղաքական իրավունքներ, հեռարձակման ոլորտ ու խղճի ազատություն:

Խմբակցությունների տեսակետները ներկայացնելուց առաջ կրկին պետք է նշենք, որ միայն վերապահումով կարելի է խորագրի ձևակերպումը տալ այն ելույթներին, որոնք հնչել են քննարկումների ընթացքում, քանի որ դրանք ոչ թե որպես «խմբակցության տեսակետ» են ներկայացվել, որն, ի դեպ, ԱԺ կանոնակարգ օրենքում հստակ սահմանված կարգավիճակ ունի, այլ եղել են տարբեր խմբակցություններ ներկայացնող պատգամավորների, այն էլ՝ հիմնականում օրինագծի հեղինակային խմբում ընդգրկվածների ելույթներ: Մենք առաջնորդվել ենք այն կանխավարկածով, որ նրանց տեսակետները խմբակցություններում առնվազն առարկություններ չեն ունեցել, ինչն էլ, ի վերջո, հաստատվել է քվեարկությամբ: Արժե թերես նկատել, որ խորհրդարանական փոքրամասնություն «Ժառանգությունը» խմբակցության տեսակետ հայտնել է գրեթե բոլոր օրինագծերի շուրջ, նրան հաջորդում է խորհրդարանում մեծամասնություն ունեցող ՀՀԿ-ն:

Ինչ վերաբերում է նախընտրական ծրագրերին, ապա, մոնիտորինգի արդյունքում մեկ անգամ ևս ու գրեթե անառարկելիորեն հաստատված կարելի է համարել այն տարածված կարծիքը, որ կուսակցությունների նախընտրական ծրագրերը հիմնականում կրում են հռչակագրային բնույթ. դրանցում արտահայտված մոտեցումները շատ ընդհանրական են՝ զուրկ որոշակիությունից ու հստակությունից:

Պարզապես նկատենք, որ նման «ուճր» ապագա գործունեության համար մեծ ազատություն է նախանշում. շատ դեպքերում ծրագրային դրույթների և արտահայտված դիրքորոշումների հակասությունը հնարավոր է լինում բացատրել «մեկնաբանությունների» հարթության վրա: Թերևս ավելորդ է դառնում նշել նաև, որ կուսակցությունների նախընտրական ծրագրերի ուշադրությունից դուրս են մնացել մի շարք հարցեր ու ոլորտներ, որոնց նրանք պետք է առնչվեին օրենսդրական գործունեության բերումով:

Ծրագիրն իրագործվել է Բաց հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ:

Փ Ո Փ Ո Խ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
«ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ

Ընդունվել է 28.04.2009թ

Նախագիծն ընդունվել է ձայների հետևյալ հարաբերակցությամբ

Կողմ 97

Դեմ 0

Ձեռնպահ 2 (անկախ պատգամավորներ)

«Հանրապետական» խմբակցություն	կողմ
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	կողմ
«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն	կողմ
«Օրինաց երկիր» խմբակցություն	կողմ
«Ժառանգություն» խմբակցություն	կողմ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2000թ. հոկտեմբերին, Եվրախորհրդին անդամակցության պահանջների շրջանակներում, սակայն վերջին մեկ տարվա ընթացքում Եվրախորհրդի ընդունած՝ Հայաստանին վերաբերող չորս բանաձևերում առկա են պահանջներ՝ օրենքը բարեփոխելու մասին: Դիտարկվող օրենսդրական նախաձեռնությունը դրանցից մեկն է, նախագիծը հեղինակել են պատգամավորները:

Առաջարկվող առանցքային փոփոխություններից մշենք մի քանիսը.

- ՀՀ Նախագահը Հանրային խորհրդի անդամներին նշանակում է իր հաստատած մրցութային կարգի համաձայն (նախկինում պարզապես նշանակում էր նրանց),
- խորհրդի յուրաքանչյուր անդամ պաշտոնը ստանձնում է երդմամբ (երդման տեքստը սահմանվում է օրենքով),
- Հանրայինի խորհրդի ֆինանսավորումը կատարվում է յուրաքանչյուր տարի «նախորդ տարվա հատկացումից ոչ պակաս» սկզբունքով (նախկինում ֆինանսավորումը կատարվում էր ըստ նախորդ տարվա ծախսերի հիման վրա կատարված նախահաշվարկի),
- հանրային հեռուստառադիոընկերությունների կանոնադրությունները այսուհետև հաստատում է ոչ թե ԱԺ-ն, այլ Հանրային խորհուրդը,
- խորհրդի 5 անդամներից առնվազն մեկը պետք է լինի կին:

Խմբակցությունների տեսակետները

- **«Հանրապետական» խմբակցություն**

Հիմնական գեկուցող Արմեն Աշոտյանը նշեց, որ փաթեթով ներկայացված օրինագիծն ունի քաղաքական հնչեղություն և կոչ արեց ընդունել այն. «Էլեկտրոնային լրատվամիջոցների գործունեությունը ապահովող օրենսդրության փոփոխությունները շարունակական գործընթաց են: Մենք չենք հավակնել բանաձևել բոլոր խնդիրների լուծումները, որովհետև, բացի տարիներ կուտակած խնդիրներից, ունենք նաև տեխնոլոգիական առաջընթացի հետ կապված նոր մարտահրավերներ օրենսդրական դաշտում: Ես ուզում եմ ասել, որ սա փոփոխությունների սկիզբն է և կանխատեսում եմ, որ կլինի այսպիսի փաթեթային փոփոխությունների ևս 2 ալիք: Դրանցից մեկը կապված կլինի «ՀՀ-ի կողմից Եվրոպական անդրսահմանային հեռարձակման ավելացման», մյուսը՝ թվայնացման հետ: Երկրորդի առնչությամբ բանախոսը դժգոհեց, թե «Հայաստանում լրացուցիչ քաղաքական ենթատեքստ են փորձում տալ այդ խնդրին», այնինչ եվրոպական բազմաթիվ երկրներում դա շատ լուրջ խնդիր է:

«Հանրապետականի» նախընտրական ծրագրում ոլորտին անդրադարձ չկա:

- **«Ժառանգություն» խմբակցություն**

Որպես աշխատանքային խմբի անդամ, համահեղինակ և քաղաքական ուժ ներկայացնող պատգամավոր՝ իր տեսակետը հայտնեց Անահիտ Բախշյանը. «Ինչ վերաբերում է ԵԽԽՎ տարբեր տարիներին արված հանձնարարականներին, հանձնարարականներին՝ ընդհանրապես ցանկացած ժողովրդավար պետության մեջ լրատվության ազատությունն ապահովելու մասին, ես ուզում եմ ասել, որ բավականաչափ ամրագրված են այդ երաշխիքները»:

Նշելով, որ կատարված փոփոխություններն էլ ավելի «ժողովրդավար և թափանցիկ» են դարձրել հեռարձակող լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմինների ձևավորման մեխանիզմները և խնդիրները դիտարկելով գերազանցապես հանրայինի տիրույթում՝ նա հանգուցալուծումը տեսավ մարդկային գործոնի մեջ. «Իրենք պիտի իրենց միջից հանեն ստրուկին և հավատան, որ անկախ մարդիկ են, և յուրաքանչյուրը պատասխանատվության զգացումով մոտենա իր գործին ու կատարի անկախ խորհրդի անդամի հանձնարարականը»:

Թեև կատարված աշխատանքը համեմատվեց կարկատաններ դնելու գործի հետ, բանախոսը հավատացած է, որ քաղաքական կամքի դեպքում օրենսդրական դաշտը բավարար է անկախ էլեկտրոնային լրատվամիջոցներ ունենալու համար:

«Ժառանգությունը» նախընտրական ծրագրում նշել է Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը փոփոխելու մասին՝ կարևորելով պետական հեռարձակման իրական փոխարինումը հանրայինով,

հեռուստառադիոընկերությունների աշխատանքը կարգավորող մարմինների անկախությունը:

▪ «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

Օրինագծի ԲՀԿ-ական համահեղինակ Նաիրա Չոհրաբյանը նշեց, որ այն հանգամանալից քննարկվել է Եվրոպայի Խորհրդի փորձագետների հետ, և «թե՛ մեր հասարակության մեջ, թե՛ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի առնվազն 2-3 բանաձևերում առկա մտահոգությունները նախագծով հնարավոր է կարգավորել»:

Նա ափսոսանք հայտնեց, որ հասարակական կազմակերպություններից ստացված մի շարք օգտակար առաջարկություններ արդեն տեխնիկապես հնարավոր չէ ներառել այս փաստաթղթում, ինչը, ըստ նրա, կարող է օրենսդրական նոր նախաձեռնության առիթ լինել:

«Բարգավաճ Հայաստանը» իր նախընտրական ծրագրում կարևորում է զանգվածային լրատվամիջոցների դերը՝ որպես բազմակարծության արտահայտման և հասարակական կարծիքի ձևավորման կարևորագույն գործիք՝ հարկ համարելով «բարելավել նրանց ազատ և անաչառ գործունեության պայմանները»:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

*Մեսրոպ Հարությունյան
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի փորձագետ*

2008 թվականի սեպտեմբերի 10-ին ՀՀ Ազգային ժողովը շատ արագ ընդունեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարելու մասին» օրենքը: Ընդ որում, օրենքի նախագիծը հանրությանը մատչելի դարձավ միայն նստաշրջանի բացման օրը՝ սեպտեմբերի 8-ին և սեպտեմբերի 10-ի նիստում ընդունվեց առաջին ընթերցմամբ: Նույն օրվա երեկոյան ժամը 18:30-ին հրավիրվեց արտահերթ նիստ, որում նախ ընդունվեց հիշյալ օրինագիծը հատուկ կարգով քննարկելու որոշում (երրորդ ընթերցմամբ քննարկումը երկրորդ ընթերցմամբ ընդունումից հետո 24 ժամվա ընթացքում անցկացնելու մասին), ապա արագ կազմակերպվեցին երկրորդ և երրորդ ընթերցումների քվեարկությունները, և օրինագիծն ընդունվեց: Երկու օր անց՝ 2008 թ. սեպտեմբերի 12-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրեց այն, սեպտեմբերի 17-ին օրինագիծը հրապարակվեց «ՀՀ պաշտոնական տեղեկագրում» և սեպտեմբերի 27-ին մտավ ուժի մեջ:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր կառավարությանն անհրաժեշտ այս օրենքը, և ինչո՞ւ այսքան հապշտապ ընդունվեց այդ, թվում է աննշան, լրացումը:

Պատասխանի համար նախ մեջբերենք օրենքն ամբողջությամբ.

Հոդված 1. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի 59-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվում: Այն հեռուստաընկերությունները, որոնց լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև 2011 թվականի հունվարի 21-ը, կարող են լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ ներկայացնել Ազգային հանձնաժողով: Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է հայցվող ժամկետով, բայց ոչ ավելի, քան մինչև 2011թ. հունվարի 21-ը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Վերոհիշյալ հարցի պատասխանը կառավարությունը փորձել է տալ՝ նախագծին կից ներկայացնելով երկուսուկես էջանոց հիմնավորում: Այդ հիմնավորման էությունը հանգում է հետևյալին. քանի որ նախապատրաստվում է անցում թվային հեռարձակման, ուստի, ըստ հիմնավորման, «...առաջարկվող լուծումը թույլ կտա ՀՀ տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման ներկայիս անալոգայինից թվային համակարգի անցումը կատարել սահուն՝ խուսափելով անցման փուլում ժամանակավոր և անիմաստ լիցենզավորման ընթացակարգերից և չխախտելով գործող և ակնկալվող իրավունքները»: Ապա կառավարությունը բերում է այս պնդումների հիմնավորումները: Վերջում հեղինակները նշում են, թե «օրենքի նախագծի ընդունումը հրատապ է, քանի որ հոկտեմբերին լրանում է մի շարք հեռուստաընկերությունների հեռարձակման լիցենզիաների ժամկետները: Առաջարկվում է օրենքի նախագծին տալ հավանություն և համարել անհետաձգելի»:

Հենց միայն վերջին հիմնավորումը («հոկտեմբերին լրանում ...») բավական է հասկանալու համար, թե ՀՀ կառավարությունը որքան հապշտապ է աշխատել այս օրինագծի վրա՝ ի հետևանք անգամ հիմնավորման մեջ թույլ տալով անճշտություններ: Բանն այն է, որ 2008 թվականի հոկտեմբերին որևէ հեռուստաընկերության հեռարձակման լիցենզիայի ժամկետ չէր լրանում: Մի շարք հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների լիցենզիաների ժամկետներ լրանում էին 2009 թվականի ապրիլին, հետևաբար, ըստ օրենքի, 6 ամիս առաջ՝ 2008 թվականի հոկտեմբերին, պիտի հայտարարվեին լիցենզավորման նոր մրցույթներ:

Անդրադառնանք, սակայն, օրենքին:

Մեղիա տեսաբանների և լրագրողական հանրության կարծիքով նման օրինագծի ընդունումը միայն մեկ նպատակ ունի. «Ա1+» և «Նոյան տապան» հեռուստաընկերությունները ևս երկու տարի զրկել լիցենզավորման մրցույթներից մասնակցելու իրավունքից: Մի շարք լրագրողական ՀԿ-ներ 2008թ. սեպտեմբերի 9-ին տարածեցին հայտարարություն, որում ասվում էր. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը հերթական անգամ ապացուցեց, որ ՁԼՄ ոլորտում իր նախաձեռնությունները միտված են ոչ թե ազատորեն տեղեկություններ ստանալու և տարածելու մարդկանց սահմանադրական իրավունքի ապահովմանը, ոչ թե դաշտի կատարելագործմանը, ոչ թե Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորություններն ու ԵԽԽՎ բանաձևերի առաջարկությունների կատարմանը, այլ հեռարձակողների վրա ունեցած տոտալ վերահսկողության և պահպանմանը և ուժեղացմանը»:

Ընդունված օրենքը անընդունելի է հետևյալ պատճառներով.

Կառավարությունը, չնայած բազմիցս հնչեցրած խոստումներին, թե ոլորտին վերաբերող որևէ օրինագիծ շրջանառության մեջ չի դրվի առանց շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկման, հերթական անգամ դա արեց գաղտնի: Այս խորհրդապահական գործելակերպը վկայում է, որ կառավարությունում էլ հասկանում էին փաստաթղթի խոցելիությունը: Այնուհետև՝ օրինագծի հեղինակները, որքան էլ ջանացել, այդպես էլ չեն կարողացել որևէ տրամաբանական հիմնավորում տալ՝ ո՞ր ծրագրով է նախատեսված, թե հենց 2010թ. հուլիսից Հայաստանում պետք է սկսվի հեռարձակման թվայնացումը, ե՞րբ և որտե՞ղ է քննարկվել և հաստատվել նման ծրագիր և ի՞նչ ժամանակացույցով է այն իրականացվելու:

Ընդունված օրենքով, ըստ էության, արվում էր ԵԽԽՎ 1620 (2008) Բանաձևի պահանջի ճիշտ հակառակը: Բանաձևում հստակ նշվում է. «Վեհաժողովը վերահաստատում է, որ Հայաստանում կա բազմակարծ էլեկտրոնային լրատվամիջոցների համար նպաստավոր միջավայրի անհրաժեշտություն և, անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Ա1+» հեռուստատեսությանը հեռարձակման արտոնագիր չտրամադրելու վերաբերյալ դատավճռին, կոչ է անում արտոնագրեր շնորհող մարմնին այժմ ապահովել արտոնագրման բաց, արդար և թափանցիկ ընթացակարգ՝ համաձայն 2008թ. մարտի 26-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված ուղենիշների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի»:

Լրագրողական հանրության ներկայացուցիչներն իրենց հայտարարությունն ավարտում էին հետևյալ կերպ. «... կառավարության այս նախաձեռնությունը որևէ ընդհանուր բան չունի ոչ հեռարձակողների, ոչ սպառողների, ոչ պետության շահերի պաշտպանության, ոչ, ինչպես նշված է կառավարության հիմնավորման մեջ, «հավասար հնարավորությունների ապահովման և շուկայական խեղումների բացառման» հետ և ընդամենը լիցենզավորման մրցույթներից՝ որպես ավելորդ «գլխացավանքից» ազատվելու մի փորձ է: Նման օրենքի ընդունումը հանգեցնելու

է նրան, որ մենք թվային հեռարձակման ժամանակաշրջան ենք մտնելու ցածրորակ, հանրության պահանջներին և միջազգային չափանիշներին չհամապատասխանող, մենաշնորհացված, հետևաբար և՛ հեշտ կառավարելի հեռարձակողներով»:

Այս հիմնավորումները, թերևս, բավարար են՝ ապացուցելու համար ընդունված օրենքի անընդունելի լինելը: Այսուհանդերձ, բերենք կառավարության հապշտապ գործելակերպի ևս մի փաստ: Բանն այն է, որ օրինագծի հեղինակները այնքան էին շտապել, որ մի մեծ վրիպակ կամ բացթողում էին թույլ տվել: Ընդ որում՝ դա չէին նկատել ո՛չ պատգամավորները, ո՛չ նախագահականի իրավաբանները, և օրենքն այդպես էլ տպագրվել էր: Նորից կարդանք օրենքը. «Մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվում: Այն հեռուստարձակությունները, որոնց լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև 2011թ. հունվարի 21-ը, կարող են լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ ներկայացնել Ազգային հանձնաժողով» (ընդգծումը մերն է - Մ. Հ.): Այսինքն՝ բաց էր մնացել այն ռադիոընկերությունների հարցը, որոնց լիցենզիայի ժամկետը նույնպես լրանում էր մինչև 2011թ. հունվարի 21-ը:

Սա ցույց է տալիս, որ կառավարությունը, սևեռված լինելով միայն հեռուստարձակությունների լիցենզավորումը դադարեցնելու վրա (որովհետև վտանգն այդտեղ էր՝ կապված «Ա1+» - ի և «Նոյյան տապան»-ի խնդիրների հետ), մոռացել էր գրել, թե ռադիոընկերություններն ինչ են անելու, եթե լրանա լիցենզիայի ժամկետը: Եվ միայն մամուլում այս կազուսի մասին մեր հրապարակումից հետո կառավարությունը նոր նախագիծ ներկայացրեց՝ իր իսկ սխալը շտկելու համար: 2008 թ. դեկտեմբերին ներկայացված այդ նախագծով մասնավորապես առաջարկվում էր վերոհիշյալ հոդվածում «վերջին մասի երկրորդ նախադասության «հեռուստարձակությունները» բառը փոխարինել «հեռուստառադիոընկերությունները» բառով»:

Եվ որպեսզի չստացվի, թե մի բառ փոխելու համար օրինագիծ է մշակվել, կառավարությունը հընթացս լրացում կատարեց օրենքի 28-րդ՝ «**Հանրային հեռուստառադիոընկերության կարգավիճակը և գործունեության սկզբունքները**» հոդվածում, նախկին՝ «**Հանրային հեռուստառադիոընկերությունը կարող է եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար: Նման հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ՝ շաբաթական մինչև մեկ ժամ, իսկ ռադիոյով՝ օրական մինչև մեկ ժամ ժամաքանակը**» ձևակերպումը փոխարինելով «**եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար: Այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ՝ շաբաթական մինչև 2 ժամ, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամ ժամաքանակը: Հայաստանի Հանրապետության ազգային**»:

փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերը և հեռուստահաղորդումները պետք է ուղեկցվեն հայերեն լուսագրով»:

Սա էական փոփոխություն չէր, և, համոզված կրկնում ենք, արվել էր միայն մի նպատակով. որպեսզի միայն «հեռուստաընկերություններ» բառը «հեռուստառադիոընկերություններ» բառով փոխարինելու մասին օրինագիծ չներկայացվի խորհրդարան: ՀՀ Ազգային ժողովն այս օրինագիծն ընդունեց 2008 թ. դեկտեմբերի 26-ին:

2009թ. ապրիլի 28-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց հեռարձակման բնագավառին վերաբերող օրինագծերի մի փաթեթ, որը ներառում էր «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը: ՀՀ ԱԺ մի խումբ պատգամավորների ստորագրությամբ այս փաթեթը շրջանառության մեջ էր դրվել դեռևս 2008 թ. վերջին: Եվ դեռ այդ փուլում փորձագետները ներկայացրին մի շարք սկզբունքային դիտողություններ: Փաթեթը, որոշ փոփոխություններով և խմբագրումներով, քննարկման դրվեց 2009 թվականի փետրվարին: Այդ ժամանակ էլ լրագրողական կազմակերպությունները սկզբունքային առարկություններ ներկայացրին, էլ չենք ասում, որ փետրվարին քննարկված օրինագծերը հապշտապ էին մշակված և զուտ օրենսդրական թերություններից զատ, ունեին տեխնիկական, ոճական և լեզվական մեղանշումներ: Այսուհանդերձ, քննադատությունից և Եվրոպայի խորհրդի փորձագիտական եզրակացությունից հետո, փաթեթը լրամշակվեց և ի վերջո ընդունվեց 2009 թվականի ապրիլի 28-ին: Սակայն այն հիմնական սկզբունքային հարցերը, որ մատնանշում էին հայաստանյան լրագրողական կազմակերպությունների փորձագետները, այդ օրենքներով չլուծվեցին:

Այդ հիմնական սկզբունքային հարցերն են.

1. Չի լուծվում հեռուստառադիոընկերությունների գործունեությունը կարգավորող մարմնի՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անկախության հարցը. միայն այն, որ Ազգային ժողովի կողմից նշանակվող անդամի մրցութային կարգ է սահմանվել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով և կամ վերասահմանվել է, որ ՀՀ նախագահը «իր հաստատած մրցութային կարգի համաձայն, մրցույթում հաղթած թեկնածուին նշանակում է Ազգային հանձնաժողովի անդամ» դեռևս այդ մարմնի անկախության երաշխիք չէ: Անկախության երաշխիք չէ նաև երդումը, որ սահմանվել է ՀՌԱՀ-ի անդամի համար:

2. Չի իրականացվում հանրային հեռուստառադիոընկերության բարեփոխում: Չեն նախատեսվում այն մեխանիզմները, որով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը կարող է վերահսկել և կարգավորել նաև հանրային հեռարձակումը:

Ընդամենը կոսմետիկ ձևափոխման են ենթարկվել Հանրային հեռուստառադիոընկերությանը վերաբերող դրույթները:

Ահա մի օրինակ.

«Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթները՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող հանրային ռադիոյի և հեռուստատեսության գործունեության անկախությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածով և օրենքներով սահմանված այլ դեպքերի»:

Կամ՝

Հոդված 13. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով պետությունը ստեղծում է անկախ հանրային հեռուստառադիոընկերություն, որի գործունեությունն ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն և գործում է սույն օրենքի, իր կանոնակարգի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան»:

Այսպիսի փոփոխությունները էական կամ սկզբունքային չեն և որևէ կերպ չեն կարող ապահովել իրապես անկախ հանրային հեռարձակում:

Իսկ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի նշանակման մասին գործող օրենքի 29-րդ հոդվածում փոփոխություն նախատեսող դրույթը այդ խորհրդի անկախության հարց չի լուծում, քանի դեռ ապահովված չեն հանրային մասնակցության մեխանիզմներ:

Ըստ փոփոխության՝

«Խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից (ընդ որում՝ առնվազն մեկը՝ կին), որոնց, իր հաստատած մրցութային կարգի համաձայն, նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը».

Թե ինչու է հասարակական ներկայացուցչություն ապահովելու փոխարեն կանանց ներկայության քվոտա սահմանվել՝ անհասկանալի է:

3. Չի ապահովվում հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման անկողմնակալ և թափանցիկ մրցույթների անցկացման հնարավորությունը: Միայն Օրենքի 50-րդ հոդվածում արտոնագրատիրոջ ընտրության նոր ձևական չափանիշներ են մտցվել: Ահա այդ հոդվածն ամբողջությամբ.

«Հոդված 31. Օրենքի 50-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ1», «բ2», «բ3» և «բ4» կետերով.

«բ1) հեռուստաընկերության և(կամ) ռադիոընկերության բիզնես ծրագիրը և դրա իրատեսականությունը.

բ2) մրցութային հայտում ներկայացված հաղորդումների բազմազանությունը.

բ3) դիմողի՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը.

բ4) մրցութային հայտով եթերային բազմազանությունն ապահովելու առաջարկությունը».

2) 2-րդ մասը «ելնելով» բառից հետո լրացնել «ֆինանսական աղբյուրների փաստաթղթային հիմնավորվածության և» բառերով.

3) 3-րդ մասը «որոշումները» բառից հետո լրացնել «և ապահովում բոլոր հիմնավորումների հրապարակայնությունն ու մատչելիությունը» բառերով»:

Հարց է առաջանում, ինչպե՞ս են ՀՌԱՀ անդամները որոշելու, օրինակ, թե ո՞ւմ բիզնես ծրագիրն է իրատեսական, ումը՝ ոչ, կամ՝ որտե՞ղ է արտացոլվելու՝ «դիմողի՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը», ի՞նչ չափանիշով է չափվում այդ կարողությունը: Մինչդեռ լրագրողական հանրությունն առաջարկում էր իրապես թափանցիկ մրցույթներ անցկացնելու կարգ: Մասնավորապես՝ առաջարկվում էր մրցութային հայտերի հանրային քննարկման գաղափարը:

4. Օրենքների փոփոխություններով չէին վերացվում 2008թ. սեպտեմբերի 10-ին ընդունված (վերը հիշատակված) օրենքի թերությունները: Այն է՝ չեղյալ չէր հայտարարվում լիցենզավորման մրցույթները դադարեցնելու մասին դրույթը: Իսկ սա չանելու դեպքում օրենքի որևէ փոփոխության մասին խոսելն անիմաստ է:

Այսպիսով, հայաստանյան փորձագետների մեծ մասի միահամուռ կարծիքով, 2009թ. ապրիլին ընդունված փաթեթը որևէ սկզբունքային հարց չի լուծում: Այն ընդամենը կոսմետիկ փոփոխությունների է ենթարկում հեռարձակման բնագավառը կարգավորող օրենսդրությունը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ

Ընդունվել է 23.10.2008թ

Նախագիծն ընդունվել է ձայների հետևյալ հարաբերակցությամբ

Կողմ 71

Դեմ 7

Ձեռնպահ 3 (անկախ պատգամավորները)

«Հանրապետական» խմբակցություն	կողմ
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	կողմ
«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն	կողմ
«Օրինաց երկիր» խմբակցություն	կողմ
«Ժառանգություն» խմբակցություն	դեմ

Նախագծի հեղինակը խորհրդարանական կոալիցիան էր: 2002 թվականին ընդունված «ԱԺ կանոնակարգ» օրենքում այս հերթական փոփոխությունը կատարվեց Եվրախորհրդի 1609 և 1620 բանաձևերի համատեքստում:

«Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը ընդունել է մի բանաձև, որը վերաբերում է ընդդիմության իրավունքներին ժողովրդավարական խորհրդարաններում: Պետք է նշեն, որ այդ բանաձևում նախատեսված իրավունքների մի զգալի մասը մեզանում իրականություն է: Մի մասը հնարավոր չէ իրականացնել՝ հաշվի առնելով սահմանադրական որոշ արգելքներ: Եվ մենք փորձ ենք կատարել լրացնելու այդ բացը, որը հնարավոր էր լրացնել. առաջին անգամ մենք տալիս ենք ընդդիմադիր խմբակցության սահմանումը...»:

փոփոխությունների նախագիծը ներկայացրեց ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գավիթ Հարությունյանը, իսկ նախագիծը, բացի սահմանումից, նաև առաջարկում է.

- Խմբակցությունն ընդդիմադիր է, եթե խմբակցության ղեկավարը կամ քարտուղարը Ազգային Ժողովի նիստում հանդես է գալիս ընդդիմադիր լինելու մասին հայտարարությամբ, և խմբակցությունն ստեղծած առանձին կուսակցության կամ կուսակցությունների դաշինքը կազմած կուսակցություններից որևէ մեկի առաջադրած անձ Կառավարության կազմում ընդգրկված չէ:
- Կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ առաջինը տրվում են ընդդիմադիր խմբակցությունների 3-ական հերթագրված պատգամավորների բանավոր հարցերը:

- ԱԺ հայտարարությունների ժամին սկզբում հայտարարություններով կարող են հանդես գալ ընդդիմադիր խմբակցությունների 3-ական հերթագրված պատգամավորներ:
- Ընդդիմադիր խմբակցությանը հնարավորություն է տրվում յուրաքանչյուր երկրորդ քառօրյա օրակարգում արտահերթ ընդգրկել մեկ օրենքի կամ ԱԺ որոշման նախագիծ. միաժամանակ նշվում են այդ իրավունքից օգտվելու բազմաթիվ սահմանափակումներ:
- Փաստաթղթում առավել մեծ ծավալ զբաղեցրած «փոփոխությունն» առնչվում է հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրության կարգին. ու թեև սահմանում է, որ այս փոփոխությունն ուժի մեջ է մտնում հաջորդ գումարման նստաշրջանից, ըստ էության, որևէ բովանդակային «նորամուծություն» չի նախատեսում, այլ միայն առաջարկում է մաթեմատիկական բանաձևի միջոցով դասակարգել խորհրդարանական խմբակցություններն՝ ըստ իրենց անդամների քանակի, և հանձնաժողովների նախագահների ու տեղակալների թեկնածություն առաջադրելու իրավունքը վերապահում է առավել մեծաքանակ խմբակցություններին:

Խմբակցությունների տեսակետները

▪ «Հանրապետական» խմբակցություն

«Որո՞նք են ամենաէական փոփոխությունները այս նախագծում: Ամենակարևորը սահմանումն է, թե ի՞նչ է նշանակում ընդդիմադիր խմբակցություն: Մի շարք այլ փոփոխություններ ևս արված են: Սակայն այս փոփոխությունները չեն կարող համարել իսկապես բովանդակային առումով հույժ կարևոր և չէի ուզեմս դրանց առանձին անդրադառնալ: Դրանք մանրուքներ են», - ասաց օրինագծի հանրապետական հեղինակը և դժգոհեց խորհրդարանական ընդդիմությունից, որ պատշաճ «հետաքրքրություն չցուցաբերեց նախագծի նկատմամբ»: Նկատեց, որ «ընդդիմությունը պետք է իր մեջ կամք գտնի և դադարի լինել գուտ քննադատ՝ ստանձնելով իր ուսերին դրված պատասխանատվությունը»:

▪ «Օրինաց երկիր» խմբակցություն

ՕԵԿ-ի ներկայացուցիչն առանց մանրամասնելու նկատեց, որ նախագիծը ընդդիմությանը լուրջ արտոնություններ է տալիս. «Քանի որ ես նույնպես համարվում եմ այս նախագծի համահեղինակ, ուղղակի ասեմ, որ շատ կարևոր նախագիծ է: Ինքս երկու տարի շարունակ եղել եմ ընդդիմադիր քաղաքական ուժի ներկայացուցիչ և շատ լավ հասկանում եմ այն դժվարությունները, որոնք եղել են, և սրանք բավականին լուրջ արտոնություններ են, որպեսզի ընդդիմադիր քաղաքական ուժի ներկայացուցիչը կարողանա իր ասելիքն ասել»: Բանախոսը «Ժառանգությանը» մեղադրեց շահարկումների, անշնորհակալության և աշխատանքից խուսափելու մեջ:

«Օրինաց երկրի» ծրագրում կարդում ենք, որ կայուն և հզոր քաղաքական համակարգի ձևավորման համար, ի թիվս այլ հարցերի, կարևոր է ներքին քաղաքական խաղաղության և համերաշխության պահպանումը, քաղաքական գործընկերության սկզբունքների և մշակույթի ձևավորումը:

▪ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն

Դաշնակցության ներկայացուցիչն էլ, որպես օրինագծի հիմնական փոփոխություն, նշեց ընդդիմության սահմանումը, ու կոալիցիոն մյուս գործընկերների մասն քննադատեց ընդդիմությանը: ՀՅԴ-ի կարծիքով՝ արքայազն է, որ «ընդդիմությունը այնքան տեղ էր ուզում խորհրդարանում, որքան անդամ այսօր չունի»: Նշելով, որ առաջարկվող «մեխանիզմները Հայաստանում չեն ստեղծվել, այլ բխում են Եվրախորհրդի բանաձևից» և փորձարկված են ժողովրդավարական խորհրդարաններում՝ ելույթ ունեցողը հորդորեց, որ ընդդիմությունը ողջունի այս փոփոխությունները՝ որպես եղած վիճակի բարելավում, թեև, իհարկե, ոչ բավարար չափով:

▪ «Ժառանգություն» խմբակցություն

Խմբակցության կարծիքով փոփոխությունները «կոսմետիկ են», որովհետև դրանցով չի ստեղծվում իրական հակակշիռ մեծամասնությանը՝ իշխանությանը: Ըստ բանախոսի՝ «Ընդդիմությունը խորհրդարանում պետք է ունենա այն հանձնաժողովները, որոնք վերահսկողական բնույթի են: Որոշ պաշտամենտներում դա աուդիտի հանձնաժողովն է, իսկ մեզ մոտ այդպիսին չկա: Այդ հանձնաժողովին որոշակիորեն մոտ է ֆինանսավարկային հանձնաժողովը, պաշտպանության հանձնաժողովը, մարդու իրավունքների պաշտպանի հանձնաժողովը»:

«Ժառանգության» կարծիքով՝ խորհրդարանից դուրս գործող Վերահսկիչ պալատի, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահների լիազորությունները ևս պետք է տրվեն ընդդիմությանը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԱԺ կոալիցիոն մեծամասնությունը ներկայացնող պատգամավորներ Դավիթ Հարությունյանի (ՀՀԿ), Արմեն Ռուստամյանի (ՀՅԴ), Գագիկ Ծառուկյանի (ԲՀԿ) և Հեղինե Բիշարյանի (ՕԵԿ) հեղինակած «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը շրջանառության մեջ դրվեց 2008թ. մայիսի 23-ին, ԱԺ նստաշրջանի ու հունիսի 9-12-ի քառօրյա նիստերի օրակարգ ընդգրկվեց հունիսի 9-ին: Հունիսի 9-ին որոշում ընդունվեց նաև «ԱԺ Կանոնակարգ» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն այն երկու ընթերցմամբ քննարկելու ու ամբողջությամբ ընդունելու մասին: Օրինագիծն առաջին ընթերցման ռեժիմով քննարկվեց և ընդունվեց

համապատասխանաբար հունիսի 9-ին և 10-ին (կողմ՝ 72, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 6), երկրորդ ընթերցման ռեժիմով քննարկվեց հոկտեմբերի 22-ին ու ամբողջությամբ ընդունվեց հոկտեմբերի 23-ին (կողմ՝ 71, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 3): Առաջին ընթերցմամբ ընդունելիս «Ժառանգություն» ընդդիմադիր խմբակցությունը քվեարկեց «ձեռնպահ», իսկ երկրորդ ընթերցմամբ ընդունելիս՝ «դեմ»: ՀՀ նախագահը օրենքը ստորագրեց 2008թ. նոյեմբերի 11-ին:

10 հոդվածներով «ԱԺ կանոնակարգ» օրենքում կատարված փոփոխություններից 1-ին հոդվածով (նայր օրենքի 14-րդ հոդվածում ավելացվող 1¹ մասով) սահմանվում է խորհրդարանական ընդդիմության կազավիճակը, ինչը բացակայում էր ՀՀ օրենսդրության մեջ: Ըստ տրված սահմանման՝ *«խմբակցությունը համարվում է ընդդիմադիր, եթե խմբակցության ղեկավարը կամ քարտուղարը Ազգային ժողովի նիստում հանդես է գալիս ընդդիմադիր լինելու մասին հայտարարությամբ, և խմբակցությունն ստեղծած առանձին կուսակցության կամ կուսակցությունների դաշինքը կազմած կուսակցություններից որևէ մեկի առաջադրած անձ Կառավարության կազմում ընդգրկված չէ»*: Այսպիսի սահմանումը թույլ չի տալիս քաղաքական որևէ ուժի ներգրավված լինել կառավարության կազմում և չսատարել նրան, ինքնահռչակվել իբրև ընդդիմադիր խմբակցություն ու օգտվել ընդդիմությանն ամրագրված իրավունքներից:

Օրինակ, նախկինում կառավարությունում անդամ ունեցող ՀՅԳ-ն ողջ ծավալով պատասխանատվություն չէր կրում կառավարության գործունեության համար և ժամանակ առ ժամանակ սուր քննադատության էր ենթարկում մի շարք ոլորտներում իրականացվող քաղաքականությունը: 1-ին հոդվածով սահմանվում է նաև խմբակցության՝ ընդդիմադիր կարգավիճակից զրկ(վ)ելու հիմքերը. *«եթե կառավարության կազմում ընդգրկվում է խմբակցությունն ստեղծած առանձին կուսակցության կամ կուսակցություններից որևէ մեկի առաջադրած անձ, կամ խմբակցության ղեկավարը կամ քարտուղարը Ազգային ժողովի նիստում հանդես է գալիս ընդդիմադիր չլինելու մասին հայտարարությամբ, ապա խմբակցությունը դադարում է ընդդիմադիր համարվել»* (եթե առկա է 1-ին պայմանը, կամ 2-րդ պայմանը, ապա...):

Նկատելի է, որ ընդդիմադիր ճանաչվելու պահանջներն ավելի խիստ են, իսկ այդ կարգավիճակը կորցնելու հնարավորությունները՝ ավելի դյուրին. եթե ընդդիմադիր խմբակցություն ճանաչվելու համար առաջադրված երկու պայմանները պետք է առկա լինեն միաժամանակ, ապա ընդդիմադիր չճանաչվելու կամ այդ կարգավիճակը կորցնելու համար բավարար է այդ պայմաններից որևէ մեկի առկայությունը:

Այսպիսի սահմանումը իշխանությունների համար տեսական հնարավորություն է ապահովում ընդդիմադիր խմբակցությանն, ըստ քաղաքական նպատակահարմարության, զրկել ընդդիմադիր կարգավիճակից, հետևաբար՝ երաշխավորված իրավունքներից՝ որոշակի հնարքներով ապահովելով անհրաժեշտ պայմաններից մեկն ու մեկը. օրինակ, երբ խմբակցությունը կազմող

կուսակցությունների դաշինքի որևէ կուսակցության հետ իշխանությունը պայմանավորվածություն է ձեռք բերում կառավարությունում անդամ առաջադրելու շուրջ կամ այդ կուսակցության ներկայացուցիչը (հատկապես եթե խմբակցության ղեկավար կամ քարտուղար է) հանդես է գալիս կառավարությանը սատարող հայտարարությամբ, կամ նրա կողմից արվում է մի հայտարարություն, որն այդպես է մեկնաբանվում ԱԺ ղեկավարության/խորհրդարանական մեծամասնության կողմից և այլն:

Օրենքի 2-րդ հոդվածում (մայր օրենքում՝ 26-րդ հոդվածում) սահմանվում է բոլոր խմբակցությունների միջև ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների (այլ ոչ թե ընդդիմադիր խմբակցություններին վերապահվող պաշտոնների) բաշխման կարգը: Դրանցում թեկնածու առաջադրելու իրավունքը մինչև ԱԺ լիազորությունների ավարտը այլևս բացառապես վերապահված է խմբակցություններին և իրացվում է ԱԺ առաջին նստաշրջանի բացման օրը: Թեկնածու առաջադրելու իրավունքը խմբակցությունների միջև բաշխվում է պրոֆեսոր Վիկտոր դ'Օնտի (D'Hondt) մեթոդով՝ «ըստ յուրաքանչյուր պաշտոնի համար ստացված գործակիցի, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $Գ_{խ} = Ա_{խ} / (Պ_{խ} + 1)$, որտեղ՝ $Գ_{խ}$ -ն խմբակցության գործակիցն է, $Ա_{խ}$ -ն խմբակցության անդամների ընդհանուր թիվն է, $Պ_{խ}$ -ն հերթական պաշտոնի համար խմբակցության գործակիցը հաշվելիս թեկնածու առաջադրելու իրավունքով խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների ընդհանուր թիվն է:

Օրենքում հանդիպող այս վերջին ձևակերպման առնչությամբ որևէ տեղ ամրագրված չէ, թե ո՞վ և ինչպե՞ս է որոշում «թեկնածու առաջադրելու իրավունքով խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններն» ու դրանց թիվը, որն օգտագործվելու է գործակիցները հաշվելիս: Մինչդեռ սահմանված է, որ «ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությունը ստանում է մշտական հանձնաժողովի նախագահի կամ տեղակալի առաջին պաշտոնի ընտրության և դրանում թեկնածու առաջադրելու իրավունքը»: Հաջորդ «պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը ստանում է մյուս խմբակցությունների համեմատությամբ առավել մեծ գործակից ունեցող խմբակցությունը: Գործակիցների հաշվարկը կրկնվում է մինչև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ վերջին պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշելը»:

Հավասար գործակիցների դեպքում իրավունքի բաշխման հարցը կարող է լուծվել խմբակցությունների փոխհամաձայնությամբ, իսկ եթե այն անհնար է՝ վիճակահանությամբ: Միաժամանակ թույլատրվում է խմբակցությունների փոխհամաձայնությամբ փոխարինել և(կամ) միմյանց զիջել իրենց կողմից թեկնածու առաջադրելու իրավունքը:

Սակայն այստեղ էլ առկա է տեսական/հիպոթետիկ հնարավորություն, որպեսզի ԱԺ քաղաքական մեծամասնությունը «վերցնի ամեն ինչ», քանի որ հատկապես թեկնածու առաջադրելու իրավունքը դեռևս չի նշանակում ընդդիմության՝ մշտական հանձնաժողովի նախագահ կամ տեղակալ ունենալու երաշխավորված իրողություն: Այն սուկ դրանց հավակնելու իրավունք է, քանի որ ընդդիմության առաջադրած թեկնածուները կարող են չընտրվել ԱԺ մեծամասնության կողմից: Այսպես՝ մայր օրենքի 97-րդ հոդվածում ավելացված 5¹ մասի համաձայն՝ «եթե մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում խմբակցության առաջադրած թեկնածուն չի ընտրվում, ապա անցկացվում են նոր ընտրություններ, որոնց ժամանակ նոր թեկնածու կարող է առաջադրել դրա իրավունքն ունեցող խմբակցությունը», իսկ 5² մասով էլ՝ եթե մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության ժամանակ խմբակցությունը թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը:

Ինչ վերաբերում է հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոններին, ապա մայր օրենքի 12-րդ հոդվածում կատարված 7¹ մասով լրացման համաձայն՝ «եթե մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնում խմբակցության առաջադրած թեկնածուն չի ընտրվում, ապա անցկացվում են նոր ընտրություններ, որոնց ժամանակ նոր թեկնածու կարող է առաջադրել դրա իրավունքն ունեցող խմբակցությունը», իսկ 7² ավելացված մասով էլ ամրագրվում է, որ եթե մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության ժամանակ խմբակցությունը թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը: Երկու դեպքում էլ հնարավոր է, որ ընդդիմադիր խմբակցության առաջադրած բոլոր թեկնածուները չընտրվեն, դրա արդյունքում՝ խմբակցությունն այլևս չի կարող թեկնածու առաջադրել, իսկ այդ դեպքում թեկնածու առաջադրելու իրավունքը կանցնի ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը:

Օրենքում առկա են նաև ընդդիմադիր խմբակցության ստացած պաշտոնները կորցնելու բազմաթիվ տեսական հնարավորություններ: Այսպես. մայր օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի բ) կետով լրացման համաձայն՝ մշտական հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի լիազորությունները դադարում են, եթե «բ) նա դուրս է եկել մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում իր թեկնածությունն առաջադրած խմբակցությունից»: Սակայն թափուր տեղ(եր)ի համար կազմակերպված ընտրությունների արդյունքում դա/դրանք կարող է(են) առաջին հերթին անցնել քաղաքական մեծամասնությանը, քանի որ օրենքի 26-րդ հոդվածի 2)-րդ կետի 1¹ լրացված մասի համաձայն, թեկնածու առաջադրելու իրավունքը վերապահվում է ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը: Դա այն դեպքում, երբ այդ պաշտոնները ընդդիմադիր խմբակցությունը նախկինում ստացել էր իր նախկին գործակցի հաշվին: Կամ էլ կառավարամետ խմբակցությունների փոխհամաձայնությամբ այդ թափուր տեղ(եր)ը կարող է/են

վերապահվել նորաստեղծ ոչ ընդդիմադիր խմբակցությանը՝ ընտրելով վերջինիս, բայց ոչ ընդդիմադիր խմբակցության առաջադրած թեկնածուին(երին): Նույնը կարող է պատահել նաև 12-րդ հոդվածի 3-րդ մասի ա) և գ) ենթակետերի (երբ հանձնաժողովի նախագահի կամ տեղակալի լիազորությունները դադարում են նրա պատգամավորական լիազորությունները դադարելու կամ հրաժարականի դեպքերում) պարագայում առաջացող թափուր պաշտոնների հետ:

Օրենքը նաև չի կարգավորում ընդդիմադիր խմբակցության (որն ստեղծել է կուսակցությունների դաշինքը) վերադասավորման, տրոհման դեպքերում խնդրո առարկա հոդվածով ամրագրված իրավունքների ծավալի վերանայման խնդիրը՝ անգամ եթե այն կազմող կուսակցությունները շարունակում են առանձին-առանձին հանդես գալ որպես ընդդիմադիր խմբակցություններ: Այսինքն՝ անկախ հետագայում խորհրդարանական ընդդիմության կազմի ու ընդդիմադիր ուժերի հարաբերակցության փոփոխությունից (խոսքը ոչ դրամատիկ փոփոխություններին է վերաբերում և ոչ թե այն իրավիճակին, երբ վերադասավորումների արդյունքում փոքրամասնությունը վերածվի մեծամասնության), խմբակցությունների միջև պաշտոնները բաշխվում են ԱԺ հենց առաջին նստաշրջանում, հետագայում առնվազն քաղաքական մեծամասնության մասով վերանայման ենթակա չեն, և նրանց պաշտպանած հանձնաժողովի նախագահներն ու տեղակալները պաշտոնավարում են մինչև ԱԺ լիազորությունների ավարտը:

Այսպիսով, ակնհայտ է, որ օրենքում կատարված փոփոխությունների ու լրացման արդյունքում քաղաքական մեծամասնությունը՝ հաղթողը, «վերցնում է համեղ պատառները», իսկ անհրաժեշտության դեպքում՝ «կարող է վերցնել և ամբողջը»՝ ընդդիմությանն անգամ զրկելով իր ունեցած պաշտոններից: Ըստ որում՝ վերը վերլուծված 2-րդ և 7-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները, որոնք կարող են անվանվել «որոշումների վրա ազդելու կամ դրանց կայացմանը մասնակցելու» իրավունքներ, ուժի մեջ են մտնելու ԱԺ հաջորդ՝ հինգերորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը (2012թ.): Դրանք ներկայիս խորհրդարանական ընդդիմությանը չվերապահվեցին՝ «քաղաքական շահարկումներից խուսափելու», «բոլոր հանձնաժողովների նախագահների ու տեղակալների պաշտոնների՝ արդեն իսկ զբաղեցված լինելու» պատճառաբանություններով:

Ընդդիմադիր խմբակցություններին վերապահված մյուս իրավունքները առավելապես կարելի է անվանել «բազմակարծության ապահովման» իրավունքներ: Այսպես, հոդված 3-ի համաձայն (մայր օրենքում՝ 30-րդ հոդվածում ավելացվող 2¹ մասի)՝ մշտական/գլխադասային հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների առնվազն մեկ երրորդը, եթե դեմ է հանձնաժողովի եզրակացությանը և ունի հատուկ կարծիք, սպա այն հարակից գեկուցմամբ (ի տարբերություն հիմնական գեկուցողի՝ առանց եզրափակիչ ելույթի իրավունքի) ԱԺ-ում ներկայացնելու հնարավորություն է ստանում: Միաժամանակ, ԱԺ հայտարարությունների նիստում ընդդիմադիր խմբակցությունների 3-ական

պատգամավորներ հայտարարությամբ հանդես գալու առաջնահերթության իրավունք են ստանում: Դրանից հետո հարցուպատասխանն ընթանում է ըստ հերթագրման հաջորդականության (մայր օրենքի 35-րդ հոդվածում ավելացող 1-ին կետ):

Մայր օրենքի 35-րդ հոդվածում ավելացվող 4¹-մասով ընդդիմադիր խմբակցությունը հնարավորություն է ստանում նաև հերթական նստաշրջանի յուրաքանչյուր երկրորդ չորսօրյա նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ նիստում քննարկման դնել իր կողմից արտահերթ համարված օրենքի կամ ԱԺ որոշման մեկ նախագիծ (դրա բացակայության կամ նույն նիստի ընթացքում քննարկումն ավարտվելու դեպքում քննարկվում են օրակարգային այլ հարցեր): Օրենքի կամ ԱԺ որոշման նախագիծն այդպիսին համարելու մասին խմբակցության որոշումը ԱԺ նախագահին է ներկայացվում ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերին նախորդող ուրբաթ օրվա ժամը 17:00-ը (մայր օրենքում ավելացվող 104² հոդվածի համաձայն):

Այս նույն հոդվածի համաձայն՝ այդպիսի նախագիծը համարվում է արտահերթ, եթե այն շրջանառության մեջ է, և դրա վերաբերյալ ստացվել է գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը կամ դրա ստացման ժամկետը սպառվել է: Մա իր մեջ վտանգ է պարունակում, որ գլխադասային հանձնաժողովը կարող է խուսափել ընդդիմադիր պատգամավորի օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ եզրակացություն տալուց՝ բաց թողնելով դրա համար սահմանված ժամկետը: Իսկ ընդդիմադիր խմբակցությունը, որքան էլ որ այն արտահերթ հարցի կարգով օրակարգ ներառելու իրավունք ունի, կարող է դառնալ իր պատգամավորի օրենսդրական նախաձեռնությունը շրջանառությունից հանելու պատասխանատուն:

Մեծ հավանականությամբ օրենքը կամ ԱԺ որոշումը չի ընդունվի, իսկ ընդդիմադիր խմբակցությունն էլ լավագույն դեպքում կարող է հարցի կապակցությամբ մի քանի ելույթներ ունենալու համար միայն ԱԺ ամբիոնն օգտագործել առավելագույնը մինչև ԱԺ հայտարարությունների նիստի սկսվելը: Եւ ոչ ավելին: Հատկանշական է, որ «հարցը արագացված լսելուն է» նվիրված 104² հոդվածի այն դրույթը, որ եթե ԱԺ-ի կողմից հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին որոշում չի ընդունվում (իսկ մեծամասնությանը անհաճո կամ ոչ շահեկան հարցերի քննարկման դեպքում նման որոշման ընդունումը բացառվում է), ապա «կրճատված են» ընդդիմության առաջադրած հարցի վերաբերյալ «խոսելու իրավունքները»:

Այսպես՝ զեկուցման և եզրափակիչ ելույթի համար հատկացվում է մինչև 7-ական րոպե (20 րոպեի փոխարեն), հարցերի և դրանց պատասխանների համար՝ մեկական րոպե, իսկ հարցուպատասխանի ընդհանուր տևողությունն էլ չի կարող գերազանցել 20 րոպեն, այսինքն՝ միջինացված կարող են հնչել մոտավորապես 10 հարց և 10 պատասխան, որից հետո հարցուպատասխանն ավարտվում է: Անգամ հարցի քննարկման ժամանակ ընդմիջում կարող է հայտարարվել միայն ԱԺ

որոշմամբ, որը նույնպես անհնար է ունենալ, եթե քվորում չլինի ընդդիմության հարցի քննարկման ժամանակ կամ մեծամասնությունը դա չցանկանա:

Այսպիսով, օրենքում ավելացվել են ընդդիմության՝ ընդամենն «ավելի շատ խոսելու» իրավունքները: Կատարված փոփոխությունների առաջին խումբը, որ վերաբերում էր որոշումների կայացման գործընթացի վրա ազդելուն կամ դրանում գործուն մասնակցություն ունենալուն, ոչ միայն սողանցքն էր է պարունակում մեծամասնության կողմից «ամեն ինչ վերցնելու» կամ ընդդիմությանը կախման մեջ պահելու առումով (անհնազանդ և անցանկալի ընդդիմությունը ընդամենը կբավարարվի իր իրավունքի իրացման անհաջող փորձերով), այլև դրանք վերապահված չեն գործող խորհրդարանական ընդդիմությանը: Իրավունքների երկրորդ խումբն էլ խիստ մակերեսային է և դրանց իրացման ընթացակարգերն այնպիսին են, որ, իբրև մխիթարանք, ընդդիմությունը կարող է մի հարց ներառել ԱԺ օրակարգում, այն արագացված ռեժիմով քննարկել և մեծ հավանականությամբ՝ տապալել սեփական օրենսդրական նախաձեռնությունն ու շրջանառությունից մեկընդմիջտ հանել այն:

Եզրակացություններ

Խորհրդարանական ընդդիմության համար այսկերպ սահմանված իրավունքները ԵԽԽՎ թիվ 1601(2008) «Ժողովրդավարական խորհրդարանում ընդդիմության իրավունքների և պատասխանատվության վերաբերյալ ընթացակարգային ուղենիշեր» 2008թ. հունվարի 23-ին ընդունված բանաձևով առաջարկվող իրավունքների սուկ մի մասն են, այն էլ՝ նեղացված: Այդ բանաձևով ԵԽ անդամ երկրների խորհրդարաններին հորդորվում է ապահովել ոչ միայն «ներկայացուցչական, բազմակարծ ժողովրդավարություն» և «ընդդիմությանը կառուցողական ու պատասխանատու դերակատարում խաղալու հնարավորություն», այլև «հանրային գործերի կառավարմանը մասնակցելու իրավունք» (1-ին կետ):

Հատկապես, երբ ԵԽԽՎ թիվ 1609(2008) «Ժողովրդավարական հաստատությունների գործառույթը Հայաստանում» 2008թ. ապրիլի 17-ի բանաձևով ՀՀ քաղաքական համակարգը քննադատության էր արժանացել ոչ թե կամ ոչ միայն ընդդիմության՝ կարծիք հայտնել չկարողանալու պատճառով, այլ «ամեն ինչ բաժին է հասնում հաղթողին» տրամաբանության արդյունքում այդ համակարգում «որոշումների կայացման գործընթացին և երկրի կառավարմանը ընդդիմության որևէ մասնակցություն բացառելու», ԱԺ-ի՝ «տարբեր քաղաքական ուժերի միջև քաղաքական բանավեճի և փոխզիջումների ձևավորման» հարթակ չձառայելու և «Հայաստանի քաղաքական սպեկտրի մի զգալի մասը չներկայացնելու» համար (6.1 կետ):

ԵԽԽՎ թիվ 1601(2008) բանաձևի համաձայն՝ ընդդիմությանը պետք է վերապահվի ոչ միայն կառավարությանը վերահսկելու ու քննադատելու, այլև կառավարության գործողությունները շարունակաբար գնահատելու ու ընդունվող

պետական որոշումների թափանցիկությունն ապահովելու նպատակով կառավարության աշխատանքները հաշվետու պահելու իրավունքները (կետ 2): Այս և մյուս իրավունքները իրականացնելու համար հորդորվում է ամրագրել այնպիսի լուծումներ, ինչպիսիք են «մշտական հանձնաժողովների նախագահությունը խորհրդարանական խմբերի միջև համամասնական ներկայացվածության հիման վրա բաշխելը». ըստ որում՝ պարտադիր համարելով, որ «առնվազն մեկ մշտական հանձնաժողով պետք է ղեկավարվի ընդհանրյան անդամի կողմից. կառավարության գործողությունները վերահսկելու առումով պատասխանատու այնպիսի հանձնաժողովների նախագահությունը, ինչպիսիք են՝ բյուջեի և ֆինանսների հանձնաժողովը, վերստուգիչ (ատլիտի) հանձնաժողովը կամ անվտանգությունն ու հատուկ ծառայությունները վերահսկող հանձնաժողովը պետք է վերապահվեն ընդդիմության անդամին»:

- ԵԽԽՎ 1609(2008) բանաձևի 8.1. կետում ամրագրված «Քաղաքական համակարգում ընդդիմությանը պատշաճ տեղ և պատշաճ իրավունքներ ապահովելու» բարեփոխում-պարտավորության շրջանակները նեղացվեցին մինչև խորհրդարանական ընդդիմության համար ավելի կրճատված ծավալով իրավունքների ամրագրումը, մինչդեռ այն պետք է վերաբերեր քաղաքական համակարգում ողջ ընդդիմության համար պատշաճ տեղին ու իրավունքներին, ինչպես սահմանված է ԵԽԽՎ 1609 բանաձևի 8.1. կետում:

- Չնայած որ վերոնշյալ կետի բարեփոխումը պետք է իրականացվեր «քաղաքական ուժերի միջև լուրջ, բաց երկխոսություն ծավալվելու» միջոցով, այն իրականում վերածվեց խորհրդարանական փոքրամասնության իրավունքների ծավալի և բովանդակության վերաբերյալ խորհրդարանական մեծամասնության միակողմանի, ոչ կոմպրոմիսային լուծումների պարտադրման գործընթացի:

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
«ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ**

1-ին ընթերցմամբ ընդունվել է 19.03.2009թ.

Առաջին ընթերցմամբ նախագիծն ընդունվել է ձայների հետևյալ հարաբերակցությամբ.

*Կողմ 88
Դեմ 0
Ձեռնպահ 3 (անկախ պատգամավորներ)*

<i>«Հանրապետական» խմբակցություն</i>	Կողմ
<i>«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն</i>	Կողմ
<i>«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն</i>	Կողմ
<i>«Օրինաց երկիր» խմբակցություն</i>	Կողմ
<i>«Ժառանգություն» խմբակցություն</i>	չի քվեարկել

Հիմնական գեկուցողը ԱԺ Կրթության և գիտության հանձնաժողովի նախագահ Արմեն Աշոտյանն էր: Նշելով, թե նախագիծը պատրաստելիս հաշվի է առնվել միջազգային իրավունքը և փորձը՝ փոփոխությունների անհրաժեշտությունը հեղինակներն այսպես հիմնավորեցին. *«հստակեցված չէ «հոգեորսություն» հասկացությունը, վերանայման ենթակա է կրոնական կազմակերպության անդամների նվազագույն քանակական շեմը, մատնանշված չեն կրոնական կազմակերպությունների քայքայիչ և ամբողջատիրական գործունեության բնութագրիչները»:* Օրենսդրական նախաձեռնությունը ներկայացվել էր փաթեթով՝ միաժամանակ փոփոխություն առաջարկելով Քրեական օրենսգրքում. «առաջարկվում է սահմանել քրեական պատիժ՝ անձանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելու, դեկավարելու կամ նրանց աշխատանքներին աջակցելու և հոգեորսությամբ զբաղվելու համար»:

Եվ այսպես, օրենքի նախագիծն առաջարկում է՝

- կատարել կրոնական կազմակերպությունների վերագրանցում՝ նախատեսելով անդամների նվազագույն քանակական շեմի բարձրացում,
- հստակ սահմանել հոգեորսություն հասկացությունը,
- հոգեորսության համար նախատեսել ազատագրվում՝ առավելագույնը 2 տարի ժամկետով:

Խմբակցությունների տեսակետները

Խորհրդարանում այս նախագծի քննարկումներին անտարբեր ու անմասն մնացին կռալիցիոն գործընկերներ ՕԵԿ-ն ու ՀՅԳ-ն, թեև դրանց ներկայացուցիչների անունները ներառված էին հեղինակային խմբի կազմում. որևէ կարծիք, տեսակետ կամ հետաքրքրություն՝ հարցերի տեսքով, նրանք չարտահայտեցին:

▪ «Հանրապետական» խմբակցություն

Հանրապետականների կարծիքով՝ առաջարկվող փոփոխությունները ժողովրդավարության, մարդու իրավունքների տեսանկյունից առավել կարևոր հիմնադրույթներ են ամրագրում օրենքում: Նրանք համոզված են, որ մեր աշխարհագրական դիրքում և աշխարհաքաղաքական դժվար միջավայրում գտնվող երկիրն իրավունք չունի ռիսկի գնալ և չափից դուրս լիբերալ գտնվել այս հարաբերություններում: Ըստ ՀՀԿ-ի հասարակությունը պատանդ է դարձել հոգեորսության տարբեր դրսևորումների ձեռքին, և ժամանակն է օրենսդրական մակարդակով շտկել իրավիճակը:

«Հանրապետականի» նախընտրական ծրագրում կրոնին հատուկ անդրադարձ չկա:

▪ «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

ԲՀԿ-ն բարձր է գնահատում հեղինակների ցանկությունը՝ «հավուր պատշաճի ընդգծելու Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմական դերը և տեղը հասարակական կյանքում»: Այս խմբակցությունը նախագծի կարևորությունը պայմանավորում է հասարակությունը «այլևայլ վտանգներից, մարտահրավերներից» պաշտպանելու համատեքստում և համամիտ է, որ խոսքը վերաբերում է պետության անվտանգությանը: Վստահելով նախագծի հեղինակների կողմից միջազգային փորձի ուսումնասիրությանը՝ խմբակցության ներկայացուցիչը նույնպես մարդու իրավունքներին առնչվող խնդիրներ, հետևաբար, նաև նախագծի միջազգային փորձաքննության անհրաժեշտություն չէր տեսնում:

«Բարգավաճ Հայաստանը» իր ծրագրում նշում է, որ Հայ առաքելական եկեղեցին պետք է ունենա Հայաստանում քրիստոնեական արժեքներ քարոզելու և ծայրահեղական աղանդների դեմ հակաքարոզչություն իրականացնելու հնարավորություն, իսկ պետությունը «Պաշտպանելով խղճի ազատությունը՝ պետք է ամուր պատնեշ դնի քաղաքացիների կյանքին, առողջությանը և արժանապատվությանը սպառնացող ազգային շահերի տեսանկյունից վտանգավոր օտարերկրյա կրոնական կազմակերպությունների, կրոնական ծայրահեղականության, ինչպես նաև այլ աղանդների դեմ»:

▪ «Ճառանգություն» խմբակցություն

Խմբակցությունը չէր կհսում առաջարկվող փոփոխությունների նկատմամբ գործընկերների խանդավառությունը և նախագծին տրված գնահատականը՝ «մանրակրկիտ և բժախնդիր աշխատանքի» վերաբերյալ: Ըստ նրանց, օրինագիծը շոշափում է նուրբ և բարդ ոլորտ, և չի կարելի առաջնորդել «պրիմիտիվ միջոցառումներ իրականացնելու ներքին «փիլիսոփայությամբ»․ հնարավոր չէ կրոնական կազմակերպությունից որևէ մեկին նստեցնել, և պատկերացնել, որ դա կվախեցնի մնացածներին»: Վստահ լինելով, որ նախագիծը լուրջ մշակման կարիք ունի՝ խմբակցության ներկայացուցիչները մտահոգված էին, որ բևեռացված հասարակության մեջ կրոնական կազմակերպությունների նկատմամբ նման մոտեցումը ավելի կմեծացնի բևեռացումը: Նրանց կարծիքով՝ անհրաժեշտ էր նախագիծն ուղարկել միջազգային փորձաքննության՝ հետազայում անցանկալի հետևանքներից խուսափելու համար:

«Ճառանգության» նախընտրական ծրագրում կրոնի թեմային հասարակական կարևորության առումով անդրադարձ չկա:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Ստեփան Դանիելյան

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ

«ՀՀ Խղճի ազատության ու կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը ընդունվել է 1991-ին հունիսի 17-ին՝ 1990-ին ընդունված համապատասխան օրենքի հիմքի վրա: 1991-ին արդեն պատրաստի նախագծում ավելացվել է Հոդված 17-ը, որտեղ թվարկվում են Հայ առաքելական եկեղեցու «մենաշնորհները»՝ հակասություն առաջացնելով օրենքի մյուս հոդվածների հետ: Օրենքում առկա են մի շարք այլ անհասկանալի դրույթներ ևս: Այդ ամենը խճճել է օրենքի տրամաբանությունը և, ըստ էության, խնդրահարույց դարձրել դրա լիարժեք աշխատանքը: Բացի դրանից՝ օրենքը չունի կիրարկման կարգ, շատ հոդվածներ դեկլարատիվ բնույթ ունեն:

Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարվել են ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1997թ. սեպտեմբերի 19-ին և 2001թ. ապրիլի 25-ին:

Օրենքի ընդունումից հետո եղել են նոր օրենք մշակելու կամ օրենքում փոփոխություններ կատարելու մի շարք նախաձեռնություններ, որոնք, սակայն, չեն հաջողել: Պատճառը մի կողմից Հայ առաքելական եկեղեցու նոր արտոնությունների և դերակատարման բարձրացման հավակնություններն են, մյուս կողմից՝ այդ պահանջների հետ հակասության մեջ մտնող ՀՀ

Սահմանադրության համապատասխան դրույթները, միջազգային համաձայնագրերն ու միջազգային պարտավորությունները:

Օրենքում փոփոխություններ առաջարկող վերջին նախագիծը հեղինակել են ԱԺ կոալիցիոն կուսակցությունները ներկայացնող պատգամավորներ Արմեն Աշոտյանը, Նաիրա Զոհրաբյանը, Հեղինե Բիշարյանը, Լիլիթ Գալստյանը և անկախ պատգամավոր Վիկտոր Դալլաբյանը:

2008 թ. հունվարին նախագիծը խորհրդարանում ներկայացվել է առաջին ընթերցմամբ և ընդունվել 2009-ի մարտի 19-ին: Հանրային քննարկումների ժամանակ, որոնք նախաձեռնել են քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունները, օրենքը ներկայացվել է Արմեն Աշոտյանի կողմից: Առաջին ընթերցման ժամանակ քննարկումներ չեն եղել այն պատճառաբանությամբ, որ նախագիծը ուղարկվելու է Վենետիկի հանձնաժողով՝ փորձագիտական եզրակացություն ստանալու համար:

2009-ի հունիսի 12-13-ը Վենետիկի հանձնաժողովի 79-րդ պլենար նիստի ժամանակ ընդունվեց Վենետիկի հանձնաժողովի, Եվրախորհրդի Մարդու Իրավունքների Իրավական Հարցերի Գլխավոր Տնօրինության և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Կրոնի կամ Համոզումնքի Ազատության Խորհրդատվական Մարմնի համատեղ եզրակացությունը (հետայսու՝ **Համատեղ Եզրակացություն**) «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ: Երեք էջանոց նախագծի վերաբերյալ կազմվել է 20 էջանոց եզրակացություն: Մի քանի կարևոր խնդիրներ, այնուամենայնիվ, դուրս են մնացել Համատեղ Եզրակացության հեղինակների ուշադրությունից:

Օրենքի նախագծի թերությունները կարելի է բաժանել երկու խմբի: Նախագծում որևէ փորձ չի արվել շտկելու գործող օրենքում առկա թերությունները, անորոշությունները տարբեր հոդվածների միջև, նաև այլ օրենքների հետ ունեցած հակասություններն ու անհասկանալի ձևակերպումները: Մյուս կողմից՝ նոր փոփոխություններն ունեն, Հայ առաքելական եկեղեցուց բացի, մյուս կրոնական կազմակերպությունների գործունեությունը սահմանափակող հոդվածներ, որոնք հակասում են ինչպես ՀՀ Սահմանադրությանը, այնպես էլ միջազգային համաձայնագրերին:

Քաղաքացիական հասարակության կողմից կազմակերպված մի շարք քննարկումների ժամանակ մատնանշվել են այն հիմնական թերությունները, որոնք հետագայում տեղ են գտել Համատեղ Եզրակացության մեջ: Ներկայացնենք նախագծի վերաբերյալ այդ փաստաթղթի «Եզրակացություններ» հատվածը, որտեղ համառոտ ներկայացված են հիմնական նկատառումները:

Եզրակացություններ

• Զննարկվող օրենքների նախագծերը որոշակի առաջընթաց են արձանագրում միջազգային պարտավորություններով սահմանված՝ մարդու իրավունքների երաշխիքների շրջանակների ու դրանց ճշգրտության բարելավման ուղղությամբ:

• Այդուհանդերձ, նախագծերն առաջացնում են մի շարք մտահոգություններ և վերանշակման կարիք ունեն: Այժմ գործող օրենքը պահանջում է ավելի ընդարձակ լրացումներ, քան այն, որոնք առաջադրվում են նախագծով:

Զննության առարկա դրույթներից բխող հիմնական խնդիրներն են.

- օրենքում (և՛ գործողում, և՛ նախագծում) պետք է կոնկրետ հիշատակվի «յուրաքանչյուր ոք» և ոչ թե պարզապես «քաղաքացիներ»: Այս կիրառումը պետք է նաև հետևողական լինի. իրավունքներ պետք է տրամադրվեն (անհատապես, թե խմբում) բոլոր անձանց՝ անկախ ազգությունից կամ քաղաքացիությունից,
- պետք է վերանայվի խղճի, կրոնի կամ համոզմունքի ազատության շրջանակը (օրինակ՝ 1-ին հոդվածում),
- օրենքը պետք է հստակորեն նշի, որ կրոնական այն համայնքները, որոնք գրանցված չեն որպես կրոնական կազմակերպություն, կարող են ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ՝ ըստ ընդհանուր դրույթների (օրինակ՝ ըստ Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի): Եթե, ըստ ընդհանուր դրույթների, նրանց հնարավոր չէ շնորհել իրաբանական անձի կարգավիճակ, ապա նրանց պետք է հնարավորություն տրվի գրանցվել ըստ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (օրինակ՝ 5-րդ հոդված),
- որպես «կրոնական կազմակերպություն» գրանցվելու պահանջները ենթադրում են վերանշակման լուրջ աշխատանքներ: Քրիստոնեության սահմանումը պետք է հանվի: Գրանցվելու համար անհրաժեշտ անդամների նվազագույն քանակը չպետք է ավելացվի,
- 7-րդ բաժնում պետք է հստակ դարձնել, որ իրավունքների ցանկն այնտեղ ներկայացված է որպես ճանաչված կրոնական խմբերի իրավունքների օրինակ և խտրականություն չի դնում համոզմունքի խմբային դրսևորման այլ ձևերի հանդեպ,
- դավանափոխության հանցակազմը պետք է վերաձևակերպվի այնպես, որ հստակ լինի՝ խոսքը վերաբերում է «ոչ պատշաճ դավանափոխությանը», առավել զգուշությամբ պետք է սահմանել «ոչ պատշաճ դավանափոխությունը», իսկ այդպիսի դավանափոխության համար նախատեսվող պատժամիջոցները պետք է վերանայել, քանի որ դրանք կարող են անհարկի խիստ թվալ,
- պետք է ընդունել, որ Քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածը (փոփոխություններով հանդերձ) չպետք է թույլ տա պատժամիջոցներ կիրառել «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության հանդեպ այն բանի

համար, որ տվյալ կազմակերպության անդամները պետք է հրաժարվեն զինվորական կամ համապատասխան այլընտրանքային քաղաքացիական ծառայությունից, քանի որ այս ուսմունքը կապված է տվյալ կազմակերպության կենտրոնական գաղափարախոսության հետ,

- պետք է վերախմբագրել այն դրույթները (հոդված 11, 2-րդ մաս), որոնք վերաբերում են կրոնական խորհրդանշանների, անունների և այլ երևույթների օգտագործմանը,
- պետք է խուսափել կրոնական համայնքների հանդեպ հնարավոր խտրականության դրսևորումներից,
- պետք է վերամշակել կամ հանել վերահսկողության արգելքը (հոդված 19):

Համատեղ Եզրակացության մեջ քննադատվում են գործող օրենքի մի շարք հոդվածներ, որոնք նախագծում փոփոխությունների չեն ենթարկվել: Մասնավորապես առաջարկվում է փոփոխություններ մտցնել կրոնական կազմակերպությունների սահմանման մեջ:

«Հոդված 5. Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն բավարարում է հետևյալ պայմանները.

ա) չի հակասում սույն օրենքի 3-րդ հոդվածի դրույթներին.

բ) հիմնվում է պատմականորեն կանոնացված որևէ Սուրբ գրքի վրա.

գ) իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ.

դ) գերծ է նյութապաշտությունից և ուղղված է դեպի գուտ հոգևոր ոլորտները»

«Սուրբ գիրքը», «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգը», «նյութապաշտությունից գերծ լինելը» վիճելի ձևակերպումներ են, որոնք չեն հապապատասխանում եվրոպական իրավական չափանիշներին և որոնք ենթակա են տարաբնույթ մեկնաբանությունների, ինչն էլ կարող է առաջացնել կամայական վճիռներ:

Համատեղ Եզրակացության մեջ վիճարկվում է անչափահասների կրոնական կազմակերպությունների անդամ լինելու արգելքը. «Պետք է ընդգծել, որ անչափահաս անձինք կարող են գրանցված միավորումների անդամներ լինել որոշակի պայմանների դեպքում» (Համատեղ Եզրակացություն):

Անհասկանալի է դիտվում գործող օրենքի 7-րդ հոդվածով գրանցված կրոնական կազմակերպությունների իրավասությունների թվարկումը: «Այդ կապակցությամբ պետք է շեշտել, որ հստակ չէ, թե արդյո՞ք առկա թվարկումը հավակնում է լինել որպես ճանաչված կրոնական կազմակերպությունների իրավունքների ու արտոնությունների հաստատված ցուցակ, թե՞ այդ հատվածը դրանով բացառում է կրոնական կազմակերպությունների կողմից կատարվող այլ գործողություններ» (Համատեղ Եզրակացություն):

Համատեղ Եզրակացության մեջ անհասկանալի է համարվում, թե ինչու ազգային փոքրամասնություններին (որոնք ունեն «իրենց ազգային դավանանքը») տրվող արտոնությունները չեն տարածվում ազգային այն փոքրամասնությունների վրա, որոնք ունեն «ոչ ազգային դավանանք»:

Առաջարկվում է ամբողջովին վերանայել Քրեական օրենսգրքում նախատեսվող փոփոխությունները, որոնք «հոգեորսության» համար սահմանում են պատիժներ: Առաջարկվում է հստակ սահմանել, որ խոսքը «ոչ պատշաճ դավանափոխության» մասին է, ընդ որում՝ սահմանումները պետք է լինեն «հանգամանալից», «խոհեմ», «ոչ լայն», իսկ պատիժները՝ «ոչ դաժան» և այլն:

Համատեղ Եզրակացության մեջ չկա անդրադարձ մի քանի կարևոր հանգամանքների: Նախ՝ եվրոպացի փորձագետները չեն անդրադարձել «հոգեորսություն» միջնադարյան եզրին, ինչը առկա է գործող օրենքում և լայնորեն կիրառվում է հայաստանյան ՋԼՄ-ներում: Գոյություն ունի «proselytism» («դավանափոխություն») հասկացությունը, որը թարգմանվել է անգլերեն «հոգեորսության» փոխարեն: Գուցե այդ պատճառով այս եզրի կիրառմանը անդրադարձ չի եղել: Դավանափոխությունը մարդու հիմնարար իրավունքներից է: Այլ խնդիր է «improper proselytism» («ոչ պատշաճ դավանափոխությունը»), երբ մարդուն ստիպողական եղանակներով դավանափոխ են անում: Այդ եզրը գործող օրենքում պետք է փոխվի՝ «հոգեորսության» փոխարեն պետք է օգտագործվի «ոչ պատշաճ դավանափոխություն» եզրը:

«Հոգեորսության» սահմանումը կարող է տարածվել ցանկացած կրոնական կազմակերպության վրա: Ուշադրություն չի դարձվել այն հանգամանքի վրա, որ «հոգե օրսության» սահմանումը և դրա համար նախատեսված պատիժները կարող են տարածվել ոչ միայն կրոնական, այլև գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական և այլ տիպի գործունեության վրա՝ ցանկության դեպքում հաստատելով գրաքննության ինստիտուտ: Կարող են արգելվել անգամ համաշխարհային և հայկական դասականների բազմաթիվ երկեր:

Հաջորդ կարևոր նկատառումը վերաբերում է նախագծի Հոդված 13-ի փոփոխությանը, որով առաջարկվում է գործող օրենքի «Արգելում է եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, եկեղեցու և կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որևէ պետական ֆունկցիա» տողում ավելացնել «... բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» բառերը:

Այս փոփոխությունը հակասում է եկեղեցու և պետության անջատ լինելու մասին սահմանադրական պահանջին: Հիմքեր կան ենթադրելու, որ այս նախագծի ընդունումից հետո փոփոխություններ կմտցվեն «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքում, և եկեղեցին մուտք կգործի հանրակրթական դպրոցներ:

2009թ. աշնանը Համատեղ Եզրակացությունն ուղարկվել է ՀՀ ԱԺ նախագահին: Նախագծի հիմնական հեղինակ Արմեն Աշոտյանն այդ ընթացքում դարձել է ՀՀ Կրթության և գիտության նախարար, և նախագծի հետագա ճակատագիրն այս պահին անհայտ է:

ԼՐԱՅՈՒՄՆԵՐ «ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՍՏԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ

Ընդունվել է 10.06.2008 թ.

Նախագիծն ընդունվել է ձայների հետևյալ հարաբերակցությամբ.

Կողմ 71

Դեմ 7

Ձեռնպահ 1 (անկախ պատգամավոր)

<i>«Հանրապետական» խմբակցություն</i>	կողմ
<i>«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն</i>	կողմ
<i>«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն</i>	կողմ (դեմ է քվեարկել միայն Վահան Հովհաննիսյանը)
<i>«Օրինաց երկիր» խմբակցություն</i>	կողմ
<i>«Ժառանգություն» խմբակցություն</i>	դեմ

Նախագծի քննարկումը Ազգային Ժողովում սկսվել է 2008թ-ի մայիսի 22-ին: Հիմնական գեկուցողը Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյանն էր: Նախագծով առաջարկվում էր Սևանա լճից բաց թողնվող ջրի չափաքանակի փոփոխություն՝ բացառապես 2008 թվականի համար: Տարին երաշտային էր, անկում էր գրանցվել հատկապես Հրազդան գետի միջին ջրատվության մակարդակում, Ապարանի ջրամբարը 2/3-ով լցվածություն չուներ, և կանխատեսելով, որ Սևան-հրազդանյան համակարգում սակավաջրության խնդիր է լինելու, շուրջ 42.000 հեկտար հողատարածքի համար, կառավարությունն առաջարկում էր գյուղատնտեսական նպատակներով Սևանա լճից բաց թողնվող ջրի չափաքանակը դարձնել 285 մլն. խմ՝ 170 մլն. խմ-ի փոխարեն: Խնդիրը քննարկվել էր նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի՝ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովում, և գրանցվել էին որոշակի տարածայնություններ՝ կապված բաց թողնվող ջրի չափաքանակի հետ: Կառավարությունը վստահեցնում էր, որ առաջարկվող չափաքանակը դեռ չի

նշանակում դրա լրիվ սպառում: Նախորդ տարիներին, օրինակ, թույլատրելի 170 մլն. խմ-ի փոխարեն օգտագործվել է ընդամենը 150 մլն. խմ-ն:

Առաջին ընթերցմամբ նախագծին կողմ քվեարկել էր 64, դեմ՝ 22, ձեռնպահ՝ 4 պատգամավոր: Առաջինից երկրորդ ընթերցում ընկած հատվածում նախագծի հեղինակները բաց թողնվող ջրի չափաքանակը 285 մլն. խմ-ից դարձրեցին 240 մլն. խմ, իսկ մինչև սա՝ պատգամավորները լսեցին ՀՀ ԳԱԱ-ի՝ Սևանա լճի խնդիրներով զբաղվող փորձագիտական խմբի ներկայացուցչին, ով տեղեկացրեց, որ հանձնաժողովը համաձայնության է եկել կառավարության հետ՝ ջրի փոփոխված չափաքանակի հարցում:

«Ժառանգությունը» կառավարության ազնվությանը չէր հավատում պատճառաբանելով, թե գործադիրը ավելի շատ մտահոգված է Սևանա լճի ափամերձ շինությունները պահպանելու խնդրով, դրա համար էլ քայլեր է ձեռնարկում՝ լճի մակարդակի բարձրացումը կանգնեցնելու համար: Երաշտները գյուղացիական տնտեսության համար դժվարություններ են ստեղծում, բայց, ըստ «Ժառանգության» քարտուղար Ստեփան Սաֆարյանի, Սևանի ջուրը անխնա վատնելու փոխարեն՝ պետք է ռազմավարական ջրամբար կառուցել:

«Ժառանգության» ծրագրում շրջակա միջավայրի պահպանությանը նվիրված առանձին ու բավական ծավալուն բաժին կա: Դրանում վերլուծված են բնական պաշարների շահագործման հետևանքով առաջացած բնապահպանական խնդիրները, նշված են միջոցառումներ, որոնք կարող են նպաստել բնապահպանական ճգնաժամերի նվազեցմանը: Կոնկրետ Սևանա լճի մասին ծրագրում ոչինչ չկա, բայց «Ժառանգությունը» միակ խմբակցությունն էր, որի՝ դահլիճում ներկա բոլոր անդամները դեմ քվեարկեցին օրենքի նախագծին՝ թե՛ առաջին, թե՛ երկրորդ ընթերցման ժամանակ:

ՀՅԳ խմբակցության տեսակետը ներկայացրեց Վահան Հովհաննիսյանը: Նա նշեց, որ խմբակցությունը կողմ կքվեարկի օրենքի նախագծին, եթե միայն կառավարությունը պատրաստակամություն հայտնի իրականացնել Սևանա լճի բնահամակարգի վերականգնման ու զարգացման ծրագիր ու մշակել այն հետևողականորեն կյանքի կոչելու ուղիները:

Սա, ըստ էության, բխում էր **ՀՅԳ**-ի նախընտրական ծրագրից, որտեղ, «Բնապահպանություն» հատվածում կարդում ենք. «Դաշնակցությունը կարևորում է Սևանա լճի բնահամակարգի վերականգնումը, պահպանումը և արդյունավետ օգտագործումը»:

Առաջին ընթերցմամբ նախագծին դեմ էր քվեարկել **ՀՅԳ**-ի 7 պատգամավոր: 2-րդ ընթերցման ժամանակ Դաշնակցությունից դեմ էր քվեարկել միայն Վահան Հովհաննիսյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրում ոչ միայն «Շրջակա միջավայրի պահպանություն» վերնագրով հատուկ գլուխ կա, այլև դրանում կա

առանձին հատված՝ հենց Սևանա լճի մասին: Կարողում ենք. «Հատուկ ուշադրություն դարձնել Սևանա լճի՝ որպես Հայաստանի բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, բնակլիմայական և ռեկրեացիոն արժեք ունեցող էկոհամակարգի հիմնախնդիրների լուծմանը: Մշակել և իրականացնել Սևանա լճի բնական մակարդակի վերականգնման, նրա էկոհամակարգի բնական պաշարների վերարտադրության, պահպանման և դրանց օգտագործման համալիր, տարեկան և նպատակային ծրագիր»:

Ո՛չ հարցի քննարկման, ո՛չ խմբակցության տեսակետ ներկայացնելիս որևէ ԲՀԿ-ական ելույթ չունեցավ, բայց հետաքրքիր էր նրանց քվեարկության պատկերը. առաջին ընթերցման ժամանակ նախագծին դեմ էր քվեարկել «Բարգավաճ Հայաստանի» 7 պատգամավոր, 2-րդ ընթերցման ժամանակ նրանց դեմը կամ դարձել էր կողմ, կամ բացակա:

ՀՀԿ-ն համոզված էր, որ խորհրդարանական ընդդիմությունը Սևանա լճի խնդիրը օգտագործում է պոպուլիստական նպատակներով, մինչդեռ չկա ոչինչ, որը կխոչընդոտի Սևանա լճի էկոհամակարգի վերականգնմանն ուղղված ընդհանուր միջոցառումներին: Հիշեցնելով, որ 1996, 1984 թվականներին Սևանա լճից ջրի շատ ավելի մեծ քանակություն է բաց թողնվել, ՀՀԿ-ն վստահեցրեց, որ այսօր ամեն ինչ արվում է օրենքով ու հանուն Սևանի՝ ե՛ւ լճի ավիամերձ կառույցների շինարարությունը, ե՛ւ գյուղատնտեսական խնդիրներ լուծելու նպատակով ջրի բացթողումը:

ՀՀԿ-ի ծրագրի հիմնական դրույթներից առաջինն ազդարարում է, որ «Հայության բնօրրանը Հայկական բարձրավանդակն է, որը հայոց աստվածատուր հայրենիքն է»: Դրույթների շարքում այս բնօրրանի բնապահպանական խնդիրների լուծման մասին ոչինչ գրված չէ:

«Օրինաց երկրի» պատգամավորները նախագծի քննարկման ժամանակ ելույթ չունեցան, խմբակցության տեսակետ նույնպես չհնչեց: Նախագծի ե՛վ առաջին, ե՛վ երկրորդ ընթերցումներին ՕԵԿ-ի բոլոր պատգամավորները կողմ քվեարկեցին: Խմբակցության այս պահվածքը, կարելի է ասել, շատ «հեռու չէր» կուսակցության նախընտրական ծրագրից, որտեղ ընդամենը կարևորվում է բնապահպանական աղետի կանխումը, կանաչ տարածքների և անտառների պետական պաշտպանության իրականացումը:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

*Կարինե Դանիելյան,
աշխ. գիտ. դոկտոր*

*«Հանուն կայուն մարդկային զարգացման»
ասոցիացիայի / UNEP ազգային կոմիտեի նախագահ*

Ինչպես հայտնի է, 2001թ. մայիսի 15-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Սևանա լճի ջրային բացասական հաշվեկշռի բացառումը /հոդված 11/: Ապա, 2001թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց «Սևանա լճի էկոհամակարգի վերականգման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքը, որը պահանջում է *“Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն քանակը սահմանել մինչև 170 մլն մ³”* /հոդված 6.1./: Միաժամանակ նշվում է, որ *“Տնտեսական խիստ անհրաժեշտության, ինչպես նաև չնախատեսված արտակարգ իրավիճակների դեպքում Կառավարությունը ... կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել չափաքանակի փոփոխության մասին ժամանակավոր ծրագիր, որը հաստատվում է համապատասխան օրենքի ընդունմամբ:”*

2008թ. մայիսին ՀՀ Կառավարությունն օգտվեց նշված հնարավորությունից և, հղում անելով արտակարգ երաշտային իրավիճակին, ներկայացրեց վերոհիշյալ օրենքում փոփոխություններ մտցնելու վերաբերյալ օրինագիծը, որը հաստատվեց ՀՀ ԱԺ-ի կողմից՝ թույլ տալով Սևանա լճից ջրառը ավելացնել մինչև 240 մլն մ³ /71 ձայն՝ կողմ, 7՝ դեմ, 1-ձեռնպահ/: Կառավարությունը առաջարկում էր ջրառը հասցնել մինչև 285 մլն մ³, սակայն քննարկումների արդյունքում, /որոնց մասնակցել են նաև ես, որպես ԱԺ անկախ փորձագետ/ հաջողվեց իջեցնել այդ թիվը մինչև 240 մլն մ³:

Օգոստոսի 21-ին, նույն հիմնավորումով, ՀՀ Կառավարությունը կրկին դիմեց ԱԺ-ին, ինչի արդյունքում և ընդունվեց մի նոր օրինագիծ /83 ձայն՝ կողմ, 4՝ դեմ/, համաձայն որի ջրի բացթողումների ծավալը ավելացվեց մինչև 360 մլն խմ:

Կառավարության հիմնավորումները հետևյալն էին.

«Ոռոգման սեզոնը 2008 թվականին սկսվեց ապրիլ ամսին, ինչը վերջին տարիների համար աննախադեպ երևույթ էր: Տեղումների երկարատև անբավարարության կամ իսպառ բացակայության, օդի բարձր ջերմաստիճանի և հարաբերական ցածր խոնավության պայմաններում ապրիլ ամսից սկսած՝ հանրապետությունում առկա էին երաշտին բնորոշ բոլոր երևույթները:

Կայուն ջրամատակարարումը հնարավոր եղավ իրականացնել հետևողական և համակարգված գործողությունների շնորհիվ, այդ թվում՝ ս.թ. ապրիլի 22-ից

մինչև մայիսի 1-ը Սևանա լճից վերցված շուրջ 9.7 մլն մ³ ջրաքանակի (առ 14.05.2008թ. Սևանա լճից վերցվել է 33.1 մլն մ³ ջրաքանակ), որոշ դոտացիոն ջրամբարներից (մասնավորապես, Ազատի և Ապարանի) ջրի ժամանակից շուտ բացթողումների, ինչպես նաև խորքային հորերի և պոմպակայանների աշխատեցման հաշվին, որոնք և դարձան ջրաքանակի դեֆիցիտի ծածկման հիմնական աղբյուրները:

Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների հիման վրա 2001-2007թթ. ընթացքում Սևանա լճից ոռոգման նպատակով ջրաքանակ հիմնականում բաց է թողնվել հունիսի առաջին տասնօրյակից սկսած:

Նմանատիպ աննախադեպ պատկեր է նաև ոռոգման սեզոնում ռազմավարական և դոտացիոն նշանակություն ունեցող Ապարանի և Ազատի ջրամբարներում: Մասնավորապես, 14.05.2008թ. դրությամբ Ապարանի ջրամբարի լցվածությունը կազմել է 27.93 մլն խմ, որը 2007 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ պակաս է 57.2 մլն խմ-ով, իսկ Ազատի ջրամբարի լցվածությունը 14.05.2008թ. դրությամբ կազմել է 45.96 մլն խմ, որը 2007 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ պակաս է 25.06 մլն խմ-ով:» /Հավելված 3, կետ 2. «Ներկա վիճակի վերլուծություն»/:

Սակայն ՀՀ Ջրային ռեսուրսների պետական կոմիտեի հիմնավորումները ավելի քան կրկնակի ջրի բացթողումների անհրաժեշտության վերաբերյալ խիստ կասկածելի էին: Ուստի, 2008թ. հունիս-օգոստոս ժամանակահատվածում «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի և այլ ՀԿ-ների փորձագետների կողմից իրականացվեց համապատասխան ուսումնասիրություն, որը հաստատեց մեր կասկածները: Տեղի ունեցան քննարկումներ Երևանում /ՀՀ Բնապահպանության նախարարությունում և Ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնում/, ինչպես նաև Գավառում /Օրհուս-կենտրոնում/, ՀՀ Ջրպետկոմի և Բնապահպանության նախարարության ներկայացուցիչների հետ, որոնց փաստարկները ոչ միայն չհամոզեցին մեզ, այլ, մեր կարծիքով, ապացուցեցին հակառակը:

Այսպես. որպես առաջին հիմնական փաստարկ, բերվում էր երկրում՝ հատկապես Արարատյան դաշտավայրում ստեղծված արտակարգ երաշտային իրավիճակը: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ երաշտ եղել է միայն ապրիլին, իսկ վեգետացիոն շրջանի հաջորդ ամիսներին եղանակային պայմաններն ավելի բարվոք են եղել: Ծիշտ է, ընդհանուր գնահատմամբ, 2008թ. սակավաջուր տարի էր, բայց վերջին տասնամյակում մենք վերապրել ենք մի քանի իսկական երաշտային տարիներ՝ /1999, 2000, 2006/, շատ ավելի դաժան բնակլիմայական պայմաններով, և կոռեկտ չէ ներկայացնել համեմատությունները 2007թ. հետ, որը բավականին ջրառատ տարի էր:

Աղյուսակ 1-3-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 2008թ. շատ ավելի բարվոք է կլիմայական առանձնահատկությունների առումով, քան մասնավորապես 2000թ: Ազատի և Ապարանի ջրամբարներում ջրի պարունակության և Հրազդան գետի բնական հոսքի ծավալների համեմատությունները նաև խոսում են 2008թ. ավելի բարվոք լինելու մասին: Սակայն նշված տարիներին, չնայած, իրոք, արտակարգ երաշտային պայմաններն, Սևանից ջրի բացթողումները չեն գերազանցել 199 մլն խմ սահմանը: Եվ բերքատվությունն էլ բացարձակ չի տուժել:

Մեր հակափաստարկներն հրապարակելուց հետո հայտարարվեց, որ տարին, իրոք, երաշտային չէ, այլ առկա են երաշտային երևույթներ: Սակայն ընդարձակվել են գյուղատնտեսական օգտագործման հողատարածքները, ինչպես նաև փոխվել է գյուղատնտեսական կուլտուրաների կառուցվածքը դեպի ավելի ջրասեր բույսերի գերակշռություն: Մեր ուսումնասիրությունները բացահայտեցին /աղյուսակ 4-5/, որ տարածքները պաշտոնապես չեն ընդարձակվել, իսկ կառուցվածքը փոփոխվել է 2-4%, ինչը նույնպես չէր կարող հիմք հանդիսանալ ջրառը 170 մլն խմ-ից մինչև 360 մլն խմ մեծացնելու համար:

Աղյուսակ 1. Միջին ամսեկան ջերմաստիճանի և տեղումների շեղումները նորմայից Արարատում 2000թ.-ին և 2008թ.-ին

(^T- ն ջերմաստիճանի շեղումն է, Q%-ն տեղումների շեղումն է)

Ամիսներ	2000 թ.		2008 թ.	
	^T	Q%	^T	Q%
IV	+2.6	-61.8	+3.1	-95,9
V	-0.3	-78.9	-1.0	-32,9
VI	+1.3	-91.7	+0.7	-68,8
VII	+3.0	-85.7	-0.2	-67,1
VII	+1.8	-87.5	~ 0	~ 0
<i>Միջինը 5 ամսվա համար</i>	+1,68	- 81,12	+0,52	-52,94

Աղյուսակ 2. Միջին ամսեկան ջերմաստիճանի և տեղումների շեղումները նորմայից Արմավիրում 2000թ.-ին և 2008թ.-ին

(^T- ն ջերմաստիճանի շեղումն է, Q%-ն տեղումների շեղումն է)

Ամիսներ	2000 թ.		2008 թ.	
	^T	Q%	^T	Q%
IV	+2.3	-15.6	+3.1	-96.9
V	-0.9	-2.2	-1.3	-1.1
VI	+0.2	-74.2	+0.6	-32.1
VII	+2.4	-100.0	-0.5	+2.5
VII	+0.9	-12.5	~ 0	~ 0
Միջինը 5 ամսվա համա ը	+0.98	- 40.9	+0,14	-25.52

Ծանոթություն ` 2000թ.-ին ջրառը Սևանից կազմել է 189,97 մլն. խ. մ.

Աղյուսակ 3. Ապարանի և Ազատի ջրամբարների ծավալը մայիսի 16-ի դրությամբ, Հրազդան գետի հոսքը վեգետացիոն շրջանում և ջրթողը Սևանա լճից, մլն խ. մ:

	1999	2000	2008
Ապարանի ջրամբար	18.6	31.1	27.9
Ազատի ջրամբար	34.6	38.6	49.5
Գումարը	53.2	69.4	77.4
Հրազդան գետի բնական հոսքը /կանխատեսում/	99	100	125
Ջրթողը Սևանից	198.76	189.97	36

Աղյուսակ 4. Ոռոգվող տարածքները Արարատյան դաշտավայրում

<i>Տարի</i>	<i>Մակերեսը</i>
<i>2004</i>	<i>41 195</i>
<i>2005</i>	<i>44 076</i>
<i>2006</i>	<i>45 456</i>
<i>2007</i>	<i>43 432</i>
<i>2008</i>	<i>43 021</i>

Աղյուսակ 5. Ոռոգվող տարածքները Կոտայքում, Արագածոտնում, Արարատում և Արմավիրում

<i>Տարի</i>	<i>Մակերեսը</i>
<i>1990</i>	<i>134 295</i>
<i>2000</i>	<i>162 803</i>
<i>2004</i>	<i>171 126</i>
<i>2006</i>	<i>150 631</i>

Սակայն խորհրդարանը, ինչպես արդեն նշվել է, նորից կողմ քվեարկեց Կառավարության առաջարկին, բացառությամբ «Ժառանգություն» խմբակցության: Մենք /Հասարակական էկոլոգիական դաշինքի 4 փորձագետներս/ Ազգային ժողովի նիստին մասնակցում էինք դիտորդի կարգավիճակով: Մեզ հաջողվեց գրուցել նաև տարբեր խմբակցությունների պատգամավորների հետ. մեր փաստարկները չէին հերքվում, սակայն մեր ընդդիմախոսները համոզում էին, թե՛ «կարևոր չէ, ինչու չի բավարարել ջուրը, կարևոր է, որ այս պահին ջրի պահանջ կա, ուստի պետք է ավելացնել ջրառը Սևանից»:

Առավել հետաքրքրական է, որ սեպտեմբերի 17-ին ՀՀ գյուղնախարարը հանդիպել է լրագրողներին և հայտարարել, որ այս տարին բերքառատ է եղել, ընդ որում՝ շնորհիվ բարենպաստ եղանակային պայմանների:

Դեռևս առաջին ընթերցման քննարկումների ժամանակ /22.05.08/ «Ժառանգության» պատգամավորները նշում էին, թե գործադիրը ավելի շատ մտահոգված է Սևանա լճի ափամերձ շինությունները պահպանելու խնդրով, դրա համար էլ քայլեր է ձեռնարկում՝ լճի մակարդակի բարձրացումը կանգնեցնելու

համար: Նույն կարծիքը շրջանառվում էր նաև հասարակության մեջ և պարբերաբար արտացոլվում մամուլում:

Դժվար է հստակ պնդել, թե ինչն է լրացուցիչ զգալի ջրթողի իրական պատճառը: Հնարավոր է միայն ենթադրել, որ լճի մակարդակի հետագա բարձրացման համար առկա էին հետևյալ խոչընդոտները.

- ավիամերձ շինությունների հիմնախնդիրը,
- որոշ կոմունիկացիաները ժամանակին չտեղափոխելու հանգամանքը,
- անտառածածկ տարածքները ժամանակին չմաքրելու փաստը, ինչը հանգեցնում է որոշ ավիամերձ տարածքների ճահճացմանը:

Չի կարելի բացառել նաև չվերահսկվող ջրօգտագործման և լրացուցիչ էներգիա ստանալու ձգտման հնարավորությունը:

Եվ վերջապես նշենք, որ փաստացի 2008թ. Սևանից բաց թողնվեց 305 մլն խմ, իսկ ՀՀ Նախագահին առընթեր նորաստեղծ Սևանա լճի հիմնախնդիրների հանձնաժողովը 2009թ. համար ջրառը սահմանել է շուրջ 150 մլն խմ:

** Օգտագործվել են «Հայհիդրոմետ»-ի, ՀՀ Գյուղատնտեսության նախարարության, ՀՀ Բնապահպանության նախարարության և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նյութերը*

Հ Ա Ր Կ Ա Յ Ի Ն Փ Ա Թ Ե Թ
Ընդունվել է 26.12.2008թ.

Նախագիծն ընդունվել է ձայների հետևյալ հարաբերակցությամբ.

Կողմ 75
Դեմ 19
Ձեռնպահ՝ 5

«Հանրապետական» խմբակցություն	կողմ
«Ժառանգություն» խմբակցություն	դեմ կամ ձեռնպահ
«Օրինաց երկիր» խմբակցություն	կողմ
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	դեմ
«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն	կողմ

Հարկային փաթեթը քննարկվեց Ազգային Ժողովի 2008 թվականի դեկտեմբերի 23-ին հրավիրված արտահերթ նստաշրջանում: Այն փոփոխություններ ու լրացումներ էր առաջարկում հարկային ոլորտի 9

օրենքներում, այդ թվում՝ «Հարկերի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Արտոնագրային վճարների մասին» և մի շարք այլ օրենքներում:

Ներկայացված հիմնավորումներով հարկային փաթեթը տեղական արտադրության խրախուսման նպատակն էր հետապնդում և դրանից բխող կանոնակարգումներ նախատեսում փոքր ու միջին ձեռնարկատիրության դաշտում: Խորհրդարանական քննարկումները կենտրոնացան հատկապես «Արտոնավճարների մասին» օրենքի նախագծի շուրջ: Այս նախագծով կառավարությունն առաջարկում էր գործունեության որոշ տեսակների՝ կոշիկի, հագուստի, գորգերի կամ երաժշտական գործիքների նորոգման և գործունեության նմանատիպ այլ տեսակների համար սահմանել եկամտահարկին և ավելացած արժեքի հարկին փոխարինող և պետբյուջե մուտքագրվող նոր վճար: Արտոնավճարի չափն առաջարկվում էր տարբերակել ըստ համայնքների. մայրաքաղաքում՝ 60 հազար դրամ, իսկ, օրինակ, սահմանամերձ բնակավայրերում՝ 12 հազար:

Աժ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանի տեղեկացմամբ՝ փաթեթը մեկ ամիս քննարկվել էր գլխադասային հանձնաժողովում, դարձել խորհրդարանական լսումների թեմա: Վարդան Այվազյանի գնահատմամբ՝ առաջարկվող նախագիծը նման արձագանքի արժանի չէր, քանի որ չէր նախատեսում հարկային դրույքաչափերի փոփոխություն, «չէր հետապնդում ֆիսկալ նպատակ» և միայն դաշտը կանոնակարգելու խնդիր ուներ :

Խմբակցությունների դիրքորոշումները

▪ «Հանրապետական» խմբակցություն

Տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանը, արդեն «Հանրապետականի» անունից, հայտարարեց, թե խմբակցությունը կողմ է քվեարկելու փաթեթին՝ հաշվի առնելով հենց այն հանգամանքը, որ հարկային դրույքաչափեր չեն փոխվելու, և ընդհակառակը՝ նոր կանոնակարգումները տնտեսվարումը դարձնելու են «առանց քաշքշուկների, հեշտ ու պարզեցված կարգավորմամբ», իսկ ընդհանրապես, տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահն ընդդիմախոսներին առաջարկեց «սուտ փրկչի կերպարանք չընդունել»:

Հանրապետական կուսակցությունն իր նախընտրական ծրագրում նշել է. «Փոքր և միջին բիզնեսի զարգացման խրախուսում՝ որպես միջին խավի ձևավորման կարևոր բաղադրիչ»: Ծրագրում խոսվում է նաև հարկման բեռի արդարացի և համամասնական բաշխման, ինչպես նաև հարկային օրենսդրության և վարչարարության մեխանիզմների հստակեցման մասին:

▪ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն

ՀՅԴ խմբակցության ներկայացուցիչ Արծվիկ Մինասյանը նշեց նախագծի դրական ու բացասական կողմերը: Խմբակցության համար օրենքի հիմքում դրված գաղափարն ընդունելի էր, իրականացման մեխանիզմները՝ թերի: Օրենքի անհրաժեշտությունն ու դրա արդյունքում հնարավոր սոցիալական լարվածությունը ՀՅԴ ներկայացուցիչն առաջարկում էր մեղմել միջանկյալ լուծումներով, «այս անձանց հարկային դաշտ հրավիրել և ոչ թե պարտադրել»: Որպես հրավերի «մեխանիզմ» առաջարկվում էր մեղմացնել արտոնավճարի չափը՝ այն սիմվոլիկ գումարի վերափոխելով:

Հայ հեղափոխական դաշնակցության ծրագրի՝ մեզ հետաքրքրող խնդրին առնչվող ձևակերպումները հետևյալն են. «Բյուջետային քաղաքականությունը պետք է լուծի սոցիալական հիմնախնդիրները...: Էապես պարզեցնել հարկային համակարգը, խմբավորել հարկատեսակները՝ կրճատելով հարկերի քանակը»:

▪ «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում նման նախաձեռնության նպատակն անհասկանալի համարեց ԲՀԿ-ն: Խմբակցության ներկայացուցչի կարծիքով՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում կառավարությունը պետք է ներկայանար միանգամայն այլ՝ հարկային մեղմացում ենթադրող օրակարգով: «Արդյո՞ք լրիվ կորցրել ենք խոշոր բիզնեսը հարկային դաշտ բերելու հնարավորությունները, և մեր հույսը մնում են խեղճ ու կրակ դանակ-մկրատ սրողներն ու բրուտագործները», - գործընկերներին հարցնում էր Գոհար Ենոբյանը և առաջարկում դեմ քվեարկել նախագծին:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն իր ծրագրում նույնպես կարևորել է փոքր և միջին բիզնեսի խրախուսումն ու ստվերային տնտեսության կրճատումը: Լուծման մեխանիզմներն, ըստ ԲՀԿ-ի ծրագրի, հետևյալն են. «... փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար՝ հարկային դաշտի բարենպաստության մակարդակի բարձրացում. փոքր և միջին ձեռնարկությունների ստուգումներով զբաղվող պետական մարմինների քանակի կրճատում»:

▪ «Օրինաց երկիր» խմբակցություն

«Օրինաց երկիր» խմբակցությունն ընդհանուր առմամբ ընդունելի համարեց նախաձեռնությունը՝ նշելով մի քանի վերապահումներ: Հովհաննես Մարգարյանը խոսեց արտոնավճարների հարցում կամավորության սկզբունքի, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությունների ցանկի հստակեցման մասին:

«Օրինաց երկիր» կուսակցությունն իր նախընտրական ծրագրում շեշտել է փոքր և միջին բիզնեսին աջակցելու պատրաստակամությունը և այն դարձրել իր ծրագրային մեխար: «Ցածր հարկերը տնտեսական աճի կարևոր նախապայման

են: Կուսակցությունը գտնում է, որ հնարավորինս պետք է ընդլայնել հաստատագրված հարկերի կիրառումը մանր և միջին գործարարության, ծառայությունների, սպասարկման և այլ ոլորտներում, նվազեցնել հարկերը և տուրքերը՝ հենվելով միջազգային փորձի վրա»:

▪ «Ժառանգություն» խմբակցություն

«Ժառանգություն» կուսակցությունն իր նախընտրական ծրագրում հետևյալ լուծումներն է առաջարկում. «...իրականացնել զբաղվածության արդյունավետ քաղաքականություն, կատարել օրենսդրական բարեփոխումներ»: Կուսակցության ծրագրի փիլիսոփայությունն ունի սոցիալական պաշտպանության ուղղվածություն: Փոքր ու միջին բիզնեսի և ստվերային տնտեսության կրճատման քաղաքականությունը դիտարկվել է իրավական դաշտի կատարելագործման միջոցով:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

*Անդրանիկ Թևանյան
տնտեսական գիտությունների թեկնածու*

*«Պոլիտեկոնոմիա» քաղաքական, տնտեսական և
իրավական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն*

2008 թվականի նախագահական ընտրություններից հետո ձևավորված նոր կառավարությունն աչքի է ընկնում տնտեսական քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնելու ակտիվությամբ, որը հատկապես վերաբերում է հարկային և մաքսային ոլորտներին:

Նկատենք, որ գործադիր իշխանության քայլերը միանշանակ չեն ընդունվում քաղաքական, գործարար և փորձագիտական շրջանակներում: Նույնիսկ իշխանական կոալիցիայի ներսում տարաձայնություններ առաջացան՝ կապված այս կամ այն օրենսդրական փոփոխությունների հետ: Մասնավորապես նմանատիպ իրավիճակ ստեղծվեց հարկային այն փաթեթի շուրջ, որը ներառում էր «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Արտոնավճարների մասին», «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին», ինչպես նաև մի շարք այլ օրենքներում փոփոխություններ, լրացումներ կատարելու մասին» (ԱԺ սղագրությունների մեջ հենց այդպես է նշված քվեարկության դնելու ձևակերպումը – Ա.Թ.) ՀՀ օրենքները:

Օրենսդրական փաթեթից ԱԺ-ում հիմնական քննարկման և վեճի առարկա դարձավ «Արտոնավճարների մասին» ՀՀ օրենքը. այն անգամ «հանրային» անվանում ստացավ՝ «Դանակ–մկրատ սրողների օրենք»:

Նշված օրենքի և ընդհանրապես գործադրի բոլոր օրենսդրական նախաձեռնությունների հիմնավորումն այն է, որ պայքար է մղվում ստվերային տնտեսության դեմ և իրականացվում է կառավարության ծրագրային այն կետը, ըստ որի բիզնեսի փաստաթղթաշրջանառությունը համարվում է թիրախային խնդիր, ինչպես նաև պարզեցվում է հարկային համակարգը և փոքր տնտեսավարողները պաշտպանվում են հարկային վարչարարության քաշքշուկներից: ՀԴՄ-ների տեղադրումը, արտոնագրային վճարների կիրառումը և մանաստիպ այլ քայլերի իրականացումը, ըստ կառավարության, պետք է նպաստի ստվերի կրճատմանը: Նկատենք, որ այդ տեխնոլոգիայով, ըստ տարբեր գնահատականների, հարկային առաջին հարվածն իրենց վրա ընդունում են բիզնեսի փոքր շերտերը, քանի որ չեն կարողանում ծախսերը հիմնավորող փաստաթուղթ ձեռք բերել խոշորից: Կառավարությունում այդ տեսակետը չեն ընդունում: Ինչևէ:

«Արտոնավճարների մասին» օրենքը կարգավորում է արտոնավճարների հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վճարողների շրջանակը, արտոնավճարների չափը և վճարման կարգը: Ըստ այդմ, արտոնավճար վճարողներ կարող են համարվել այն անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում օրենքով սահմանված գործունեության տեսակների մասով մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարված աշխատանքների) իրացման շրջանառության (համախառն եկամտի) ընդհանուր գումարը չի գերազանցել 2,5 մլն. դրամը:

Օրենքը սահմանել է նաև այն ֆիզիկական անձանց ցանկը, որոնք չեն կարող համարվել արտոնավճար վճարողներ: Տարբերակված մոտեցում է ցուցաբերվել մայրաքաղաքում և մարզերում գործող անհատների համար, ըստ որի արտոնագրային վճարի տարեկան չափը տատանվում է 12.000-ից մինչև 60.000 դրամի սահմաններում:

Օրենքին կից հավելված 1-ում ներկայացված են գործունեության այն տեսակները, որոնք համարվում են արտոնագրային վճարման ենթակա: Դրանք են.

1. կոշկեղենի և կաշվե այլ արտադրատեսակների նորոգում,
2. հագուստի նորոգում,
3. գորգերի և գորգագործական արտադրատեսակների նորոգում,
4. մորթե և կաշվե հագուստի, գլխարկների նորոգում,
5. երաժշտական գործիքների, կենցաղային տեխնիկայի և (կամ) ժամացույցների նորոգում,
6. անկախ դերասանների գործունեություն՝ դերասանների, ռեժիսորների, երաժիշտների, երգիչների, հեղինակների, ասմունքողների, համերգավարների,
7. պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն,

8. սպորտային խմբակների կազմակերպում,
9. կար ու ձևի, հելյունագործության դասավանդում,
10. տնային տնտեսությունների վարում (դայակներ, անձնական վարորդներ, ընտանեկան խոհարարներ, կենցաղային և այլ անձնական (ընտանեկան) ծառայություններ մատուցողներ),
11. ԲՈՒՀ-եր և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական, ինչպես նաև աշակերտների ուսուցողական այլ դասընթացների կազմակերպում (կրկնուսույցներ),
12. կտրող գործիքների, դանակային արտադրատեսակների սրում,
13. բրուտագործական և խեցեգործական առարկաների, կերպարվեստի գործերի ստեղծում և վաճառք,
14. դարբնոցային գործունեություն:

Օրենքի քննարկման ժամանակ հնչել են կողմ և դեմ կարծիքներ:

Կողմ փաստարկներ

- Արտոնագրի վճարումը պարզեցնում է այսպես կոչված ինքնագրադավածների հարկային հարաբերությունների դաշտը
- Վճարների չափը մեծ չէ և չի կարող խոչընդոտել ինքնագրադավածներին
- Պետությունը պետք է վերահսկի բոլոր եկամուտ ստացողներին
- Ինքնագրադավածները օրենքի օգնությամբ գերծ կմնան չինովնիկական քաշքշուկներից:

Դեմ փաստարկներ

- Տնտեսական ճգնաժամի պայմաններում չի կարելի դանակ-մկրատ սրողներին հարկային տեռորի ենթարկել և այժմ չարժե այդ օրենքը կիրառել
- Արտոնագրի վճարի չափը մեծ է և կարող է նաև հոգեբանական բացասական ազդեցություն ունենալ մարդկանց վրա
- Օրենքը սողանցքներ է թողնում, և չարաշահումները չեն վերանում:

Մեր կարծիքով, օրենքն ունի մի շարք թերություններ, որոնք, անկախ հարցի սոցիալական, տնտեսական և քաղաքական ենթատեքստից ու գնահատականից՝ կիրառման դժվարություններ են առաջացնելու: Իրավական առումով տրված չեն այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են.

Ինչպե՞ս է պետությունը որոշելու արտոնագրային վճարման ենթակա գործունեությամբ զբաղվողներին, երբ հստակ մեթոդաբանություն չկա, որով պարզվի, որ տվյալ սուբյեկտի տարեկան գործունեության արդյունքում շրջանառությունը չի գերազանցել 2,5 մլն դրամը:

Ինչպե՞ս է պետությունը բացահայտելու արտոնագրային վճարման ենթակա գործունեությամբ զբաղվողներին:

Ինչպե՞ս են կարգավորվում այլ տնտեսվարող սուբյեկտների և ինքնազբաղվածների հարաբերությունները՝ փաստաթղթերի տրամադրման առումով:

Ի՞նչ է սպասվում այն ինքնազբաղվածներին, ովքեր կխուսափեն արտոնավճարից:

Ներկայացված օրենսդրական փաթեթը երկակի մեկնաբանություն ունի. կողմ քվեարկողները նշում են, որ փաթեթը նպաստելու է փոքր ու միջին ձեռներեցությանը, իսկ դեմ քվեարկողները՝ հակառակը: Լավագույն գնահատականը կարող են տալ ժամանակն ու կոնկրետ արդյունքները, քանի որ առայժմ համապատասխան վիճակագրական ցուցանիշները բացակայում են:

**ՓՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ
«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ**

Ընդունվել է 26. 02.2009թ.

ԱԺ գարնանային նստաշրջանի ընթացքում քննարկված ու ընդունված այս օրինագիծը ուշագրավ է ոչ այնքան փոփոխությունների փաստով, որքան այն հանգամանքով, որ նույն օրենքը փոփոխության էր ենթարկվել 2 ամիս առաջ՝ հակառակ տրամաբանությամբ: Եթե դեկտեմբերին ԱԺ պատգամավորները կողմ քվեարկեցին ներմուծվող ապրանքների սկզբիցային դրույքաչափերի բարձրացման օգտին, ապա փետրվարին կողմ քվեարկեցին նույն դրույքաչափերը նվազեցնելու օգտին:

Օրենքի փոփոխությունների առաջին նախագիծը հեղինակել են անկախ պատգամավորներն ու ՀՅԴ խմբակցության ներկայացուցիչները, երկրորդը՝ «Հանրապետական» խմբակցության անդամներ Գալուստ Սահակյանն ու Արմեն Աշոտյանը: Առաջին դեպքում նշվում էր, որ օրենսդիրը հակաճգնաժամային քայլի է դիմում՝ տեղական արտադրողի համար համեմատական առավելություն, հետևաբար մրցակցային նպաստավոր պայմաններ ապահովելով նույնատեսակ ապրանքներ ներկրողի նկատմամբ: Երկրորդ դեպքում նշվում էր, որ նպատակը ներկրողի և արտադրողի միջև հավասար մրցակցային պայմաններ ապահովելն էր:

Երկրորդ փոփոխությամբ ներկայացված հիմնավորումները հիմնված էին նաև «պրագմատիկ» հաշվարկների վրա: «Ներմուծվող ապրանքների սկզբիցային հարկի դրույքաչափերի կտրուկ բարձրացումը անխուսափելիորեն կանդրադառնա ներմուծման ծավալների վրա: Եթե նույնիսկ ոգելից խմիչքների ներմուծման ծավալների կրճատումը «փոխհատուցվի» արտադրության ծավալների ավելացմամբ, տեղի կունենա սկզբիցային հարկից հարկային մուտքերի նվազում, քանի որ ՀՀ-ում արտադրվողի համեմատ ներմուծվող ոգելից խմիչքների զգալի մասը ավելի բարձր գնային միջակայքերում իրացվող

ապրանքատեսակներ են, հետևաբար՝ դրանցից գանձվող ակցիզային հարկը ավելի մեծ գումար է կազմում»:

Վերափոխված օրինագիծը քննարկվեց հատուկ կարգով (երկրորդ ընթերցմամբ քննարկումն առաջին ընթերցմամբ ընդունումից հետո 24 ժամվա ընթացքում անցկացնելու ռեժիմով):

*Քվեարկության արդյունքներն այսպիսին են.
առաջին ընթերցում՝ 71 կողմ, 21 դեմ և 4 ձեռնպահ (23.02.2009թ.),
երկրորդ ընթերցում՝ 71 կողմ, 5 դեմ, 2 ձեռնպահ (26.02.2009թ.):*

Նախագծին կողմ են քվեարկել ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և ՕԵԿ-ը: ՀՅԴ-ն չի մասնակցել քվեարկությանը: «Ժառանգության» պատգամավորներից ներկա գտնվողները դեմ են քվեարկել:

Ի դեպ, օրենքի 1-ին տարբերակը ներկայացրած պատգամավորները, ովքեր հիմնավորում էին տեղական արտադրողի շահերից բխող՝ ներմուծվող ապրանքների ակցիզների բարձրացման անհրաժեշտությունը, օրենքի 2-րդ՝ հակառակ տրամաբանությունն ունեցող, վերջնական տարբերակի քվեարկությանը հիմնականում չեն մասնակցել կամ դեմ են քվեարկել (բացառությամբ ԲՀԿ-ն ներկայացնող Արշակ Մխիթարյանի, ով կողմ է քվեարկել խմբակցության որոշմամբ):

Խմբակցությունների դիրքորոշումը և նախընտրական ծրագրերը

Օրինագծի քննարկման ընթացքում խմբակցությունները, բացառությամբ «Ժառանգության», տեսակետներ չեն ներկայացրել:

«Ժառանգության» գնահատմամբ, նոր փոփոխությունները «անթույլատրելի անսկզբունքայնության» դրսևորում էին:

▪ «Հանրապետական» խմբակցություն

Խմբակցությունը կողմ է քվեարկել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի վերջնական տարբերակին, այնինչ իր ծրագրի «Արդյունաբերություն» հատվածում նշել է. «Խրախուսել ներմուծվող ապրանքների փոխարինումը հայաստանյան արտադրանքով»: Բացի այդ, ծրագրի «Տնտեսություն» հատվածում նախատեսված է «Արտահանման ուղղվածություն ունեցող տնտեսության ճյուղերի զարգացման խթանում՝ բարենպաստ հարկային և մաքսային քաղաքականության իրականացմամբ՝ ապահովելու համար արտահանման տեմպերի առաջանցիկ աճ ներմուծման նկատմամբ»:

Փաստորեն այլոհոլային ապրանքների ներմուծման նկատմամբ սկզբում բարձրացնելով, իսկ այնուհետև իջեցնելով ակցիզային դրույքաչափերը՝ ՀՀԿ-ն փորձում է խթանել տեղական արտադրությունը և վարել այնպիսի

քաղաքականություն, որ արտահանման տեմպերն առաջանցիկ աճ ունենան ներմուծման նկատմամբ:

▪ «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

Այս կուսակցությունը նույնպես կողմ է քվեարկել դիտարկվող օրենքին: ԲՀԿ-ի պարագայում էլ պատկերը նույնն է, ինչպես ՀՀԿ-ի դեպքում էր՝ որոշակի շեղում քվեարկության և ծրագրային դրույթների միջև: Կուսակցության նախընտրական ծրագրի «Տնտեսական քաղաքականություն» բաժնում կարդում ենք. «Հայրենական արտադրության, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման նպատակով՝ հարկային դաշտի բարենպաստության մակարդակի բարձրացում»:

ԲՀԿ-ի նախընտրական ծրագրի «Արտաքին պարտքի արդյունավետ կառավարում և արտաքին տնտեսական քաղաքականություն» հատվածում նշված է նաև, որ պետք է «ընդլայնել հայրենական արտադրանքի իրացման շուկաները», ինչպես նաև «հատուկ ուշադրություն դարձնել ներքին շուկայի պաշտպանության հարցերին, որի ուղղությամբ համապատասխան օրենսդրությունն առ այսօր չի կիրառվում՝ հանգեցնելով առանձին շուկաների «դեֆորմացմանը» և հայրենական արտադրողների շահերի անտեսմանը»:

▪ «Օրինաց երկիր» խմբակցություն

ՕԵԿ-ի մոտ նույնպես նկատվում է շեղում ծրագրային դրույթներից: Կուսակցությունը կողմ է քվեարկել օրենքին, այնինչ իր ծրագրի «Տնտեսություն» բաժնում նշել է. «Արտահանման ծավալների ավելացում, արտահանող ձեռնարկությունների, պետական աջակցություն», ինչպես նաև «Օտարերկրյա ներդրողներին և հայրենական արտադրողներին հետևողական օգնություն և աջակցություն աշխատատեղերի ստեղծման գործում»: Այսինքն ստացվում է, որ պատրաստի ալկոհոլային արտադրանքի ներմուծողների համար համեմատաբար ցածր ակցիզային դրույքաչափ սահմանելուն կողմ քվեարկելով՝ ՕԵԿ-ը փորձելու է աջակցել հայրենական արտադրողներին:

▪ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն

Կուսակցությունը օրենքի 1-ին տարբերակին կողմ էր, իսկ երկրորդի դեպքում պարզապես չմասնակցեց քվեարկությանը՝ յուրօրինակ ձևով դեմ արտահայտվելով: Բանն այն է, որ ՀՅԴ-ն այն ժամանակ իշխող կոալիցիայի անդամ էր և, հավանաբար, չի ցանկացել ուղղակիորեն դեմ քվեարկել և արդյունքում ստացվել է չմասնակցություն:

ՀՅԴ-ի նախընտրական ծրագրի «Արդյունաբերություն» բաժնում մասնավորապես գրված է. «Արդյունաբերական ձեռնարկությունների խելամիտ, ընտրանքային պաշտպանություն և աջակցություն այնքան ժամանակ, քանի

դեռ դրանք բավականաչափ չեն ամրապնդվել օտարերկրյա ընկերությունների հետ մրցակցելու համար»:

Կարելի է ասել, որ ներմուծման նկատմամբ համեմատաբար բարձր ակցիզային հարկեր սահմանելուն կողմ լինելով՝ ՀՅԳ-ն տեղավորվել է իր նախընտրական ծրագրի շրջանակներում:

▪ *«Ժառանգություն» խմբակցություն*

Համանուն խմբակցությունը դեմ է քվեարկել օրենքին: Կուսակցության նախընտրական ծրագրի «Տնտեսական զարգացում» բաժնում առանձնահատուկ կարևորվել է տեղական արտադրության և հատկապես ներմուծման փոխարինման խրախուսումը. «Արտահանումը խթանելու և ներմուծմանը փոխարինող արտադրությունը խրախուսելու նպատակով մաքսային և հարկային օրենսդրության մեջ, ինչպես նաև՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների կատարում»:

«Ժառանգության» նախընտրական ծրագրում մեծ տեղ է հատկացված գյուղատնտեսական ապրանքների իրացման և վերամշակման խնդիրներին, որը առնչվում է նաև գինու, օղու և կոնյակի արտադրությանը: Դիտարկվող օրենքին դեմ քվեարկելով՝ «Ժառանգությունը» չի շեղվել իր ծրագրային դրույթների փիլիսոփայությունից:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻԸ

*Անդրանիկ Թևանյան
տնտեսագիտական գիտությունների թեկնածու*

*«Պոլիտէկոնոմիա» քաղաքական, տնտեսական և
իրավական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն*

Դիտարկվող ժամանակահատվածում ԱԺ-ում քննարկված և քվեարկված ամենաուշագրավ օրենքներից է «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Բանն այն է, որ սույն օրենքը շատ կարճ ժամանակահատվածում 2 անգամ կտրուկ փոփոխությունների ենթարկվեց և 2 դեպքում էլ հիմնականում նույն մարդիկ հիմնավորում էին օրենքի այդ կերպ ընդունման անհրաժեշտությունը: Չավելշտն այն է, որ 1-ին անգամ ներկայացված օրենքի փոփոխությունը նախատեսում էր ներմուծվող ապրանքների ակցիզային դրույքաչափերի բարձրացում, իսկ 2-րդ անգամ՝ ճիշտ հակառակը: Ի դեպ, 2 դեպքում էլ օրենքներն ընդունվել են խորհրդարանի ճնշող մեծամասնությամբ: Փոփոխվող դրույթը վերաբերում էր ՀՀ 2000 թվականի հուլիսի 27-ին ընդունված «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի առաջին կետին:

Եվ այսպես, «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի առաջին փոփոխությունը, որը ներկայացվել էր պատգամավորներ Արա Նոսնյանի, Սիքայել Մանուկյանի, Արշակ Մխիթարյանի, Սամվել Բալասանյանի, Վերսանդիկ Հակոբյանի, Հակոբ Հակոբյանի, Աշոտ Ափոյանի, Կարեն Վարդանյանի, Սիքայել Վարդանյանի և Ալեքսան Դետրոսյանի կողմից, ներմուծողների համեմատ առավելություններ էր ապահովում տեղական ենթասկզբիցային ապրանքներ արտադրողների համար:

Օրենքի փոփոխություն առաջարկողների ցանկը հետաքրքրական է այն առումով, որ նշյալ անձանց հիմնական մասը, ինչպես նաև օրենքին կողմ արտահայտված մյուս պատգամավորներից շատերը, ակցիզային հարկ վճարողների դաշտում գործող խոշոր կազմակերպությունների սեփականատերեր են և, փաստորեն, այդ փոփոխությունը որոշակի շահեր ունեցող խմբերի լոբբինգի արդյունք էր:

Հայաստանում ակոհոլային խմիչքներ արտադրողների հիմնական մասնակիցները ներկայացված են Ազգային ժողովում և այնտեղ գործում է, այսպես կոչված, «Սպիրտային ֆրակցիա»: Հենց նրանց նախաձեռնությամբ էլ օրինագիծն ընդունվեց: Հիմնավորումն այն էր, որ միջազգային տնտեսական ճգնաժամի հետևանքով կրճատվել են սպառման ծավալները ինչպես դրսում, այնպես էլ ՀՀ-ում: Ուստի անհրաժեշտ է գոնե ներքին սպառման համար արտադրվող ծավալները պահպանել, իսկ դրա համար պետք է տեղական արտադրողը առավելություն ստանա նույնատեսակ ապրանքներ ներկրողի նկատմամբ, որպեսզի դիմանա մրցակցությանը: Օրինագիծը պաշտպանողները նշում էին նաև, որ ներկրողների նկատմամբ համեմատական հարկային առավելությունը թույլ կտա չկրճատել աշխատատեղերը և վճարունակ պահանջարկի համընդհանուր նվազման պայմաններում չավելացնել սոցիալական խնդիրների բեռը բյուջեի վրա:

Ակցիզային դրույքաչափերի տարբերակված մոտեցմանը կողմ արտահայտվողների հաջորդ փաստարկն այն էր, որ վերջին տարիներին արձանագրվող ՀՀ ազգային դրամի շարունակական արժեվորումը արհեստականորեն ուժեղացրել է ներմուծողների դիրքերը ակոհոլային խմիչքի շուկայում, և ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխությունը որոշակիորեն կշտկի իրավիճակն ու կնպաստի մրցակցության բարելավմանը:

Ե՛վ ԱԺ-ում, և՛ կառավարությունում օրենքի փոփոխությունը ողջունվեց: Իշխանական քարոզչությունը օրենքի նախագծի ընդունումը ներկայացնում էր որպես հակաճգնաժամային քայլ և ընդգծում, որ պետությունը օժանդակում է տեղական արտադրողներին:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի փոփոխումից քիչ անց պատգամավորներ Գալուստ Սահակյանի և Արմեն Աշոտյանի (այժմ ՀՀ կրթության և գիտության նախարար) կողմից առաջարկվեց նոր փոփոխություն,

որը կրկին վերաբերում էր ակցիզային դրույքաչափերին: Հերթական փոփոխությունն արդեն քննարկման դրվեց 1-ին անգամ ընդունված փոփոխությունների տրամաբանությանը ճիշտ հակառակ հիմնավորումներով:

Ներկայացնենք դրանք այնպես, ինչպես նշված է «օրենքի հիմնավորումներ» հատվածում. «Ներմուծվող ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերի կտրուկ բարձրացումը անխուսափելիորեն կանդրադառնա ներմուծման ծավալների վրա: Եթե նույնիսկ ոգելից խմիչքների ներմուծման ծավալների կրճատումը «փոխհատուցվի» արտադրության ծավալների ավելացմամբ, տեղի կունենա ակցիզային հարկից հարկային մուտքերի նվազում, քանի որ ՀՀ-ում արտադրվողի համեմատ ներմուծվող ոգելից խմիչքների զգալի մասը ավելի բարձր գնային միջակայքերում իրացվող ապրանքատեսակներ են, հետևաբար՝ դրանցից գանձվող ակցիզային հարկը ավելի մեծ գումար է կազմում:

Ներմուծվող ապրանքների համար ակցիզային հարկի դրույքաչափերի կտրուկ բարձրացումը կարող է այդ ապրանքատեսակներն արտահանող երկրներին դրդել համարժեք միջոցներ կիրառելու Հայաստանի Հանրապետությունից այդ երկրներ արտահանվող ապրանքների առումով կիրառելու հակազդման միջոցներ:

Ներմուծվող ոգելից խմիչքների ծավալների կրճատումը չի նպաստի ՀՀ-ում արտադրվող համապատասխան արտադրատեսակների որակի բարձրացմանը՝ մրցակցային անհավասար պայմաններ ստեղծվելու պատճառով: Նույն պատճառով, ինչպես նաև ներմուծվող ապրանքների գների բարձրացումը (բարձր ակցիզային հարկ սահմանելու պատճառով) նախադրյալներ կստեղծի ՀՀ-ում արտադրվող համապատասխան արտադրատեսակների իրացման գների բարձրացման համար»:

Վերափոխված օրինագիծը քննարկվեց հատուկ կարգով (երկրորդ ընթերցմամբ քննարկումն առաջին ընթերցմամբ ընդունումից հետո 24 ժամվա ընթացքում անցկացնելու ռեժիմով) և ընդունվեց կողմ ձայների ճնշող առավելությամբ:

Իշխանական քարոզչամեքենան նույն ձևով դրական գնահատեց «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ փոփոխությունը ևս, սակայն շեշտադրումն այն էր, որ պետությունը կրկին հակաճգնաժամային քայլի է դիմում՝ ապահովելով հավասար մրցակցային պայմաններ ներմուծողների և արտադրողների միջև:

Արդյունքում ստացվեց, որ նույնիսկ ներկայացված լինելով ԱԺ-ում՝ տեղական արտադրողների «Սպիրտային ֆրակցիան» չկարողացավ սեփական շահերը պաշտպանել և արտախորհրդարանական «Ներմուծողների

ֆրակցիան» կարողացավ վերջնախաղում հաղթանակ տանել: Թե ինչու՞ այդպես ստացվեց՝ հարցի պատասխանը սույն վերլուծության շրջանակներից դուրս է:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ՀՀ ՕՐԵՆՄԴԻՐ, ԳՈՐԾԱԴԻՐ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ

Ընդունվել է 27.11.08թ.

Նախագիծն ընդունվել է ձայների հետևյալ հարաբերակցությամբ.

Կողմ 66
 Դեմ 7
 Չեռնպահ՝ 7

«Հանրապետական» խմբակցություն	կողմ
«Ժառանգություն» խմբակցություն	դեմ
«Օրինաց երկիր» խմբակցություն	հիմնականում ձեռնպահ
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	անհատական կարգով և բազմազան
«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն	

Նախագիծը փաթեթով ներկայացվեց կառավարության առաջարկով հրավիրված արտահերթ նիստում, միաժամանակ օրենսդիրների հաստատմանը ներկայացվեց «Դատախազության մասին» օրենքում փոփոխություն կատարելու նախագիծը: Ընդունվեց որոշում՝ երկրորդ ընթերցումը առաջինից 24 ժամ անց կազմակերպելու մասին: Շտապողականությունը պայմանավորված էր «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, որի քննարկումներն ընթանում էին հերթական նիստերի ժամանակացույցով:

Ներկայացված նախագծերով առաջարկվում էր ամրագրել, որ ՀՀ ընդհանուր իրավասության դատավորի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա «Պետական բյուջեի մասին» օրենքի առանձին հոդվածով: Նույն ձևակերպումը առաջարկվում է նաև «Դատախազության մասին» օրենքի պարագայում:

Ըստ հիմնական զեկուցող սոցիալական ապահովության նախարարի, դատավորների աշխատավարձը չէր բարձրացվել 2003թ., մինչդեռ դատախազներինը բարձրացել էր 2008թ. հունվարի 1-ից, սակայն վերանայման էր

ենթարկվել այն դրույթը, որը գլխավոր դատախազի աշխատավարձը կախվածության մեջ էր դնում Վճռաբեկ դատարանի նախագահի աշխատավարձի չափից: Փոփոխությունները կառավարությունը պայմանավորեց հակակոռուպցիոն քաղաքականությամբ և հույս հայտնեց, որ դատավորի առաքելությանը համապատասխան վարձատրությունը կնպաստի անկախ և անաչառ դատական համակարգ ունենալուն:

Նախագծի վերջնական տեքստում ձևակերպվեց, որ այն ունի նորմատիվ իրավական ակտի կարգավիճակ և գործելու է մեկ տարվա կտրվածքում:

Խմբակցությունների տեսակետները

- **«Օրինաց երկիր» խմբակցություն**

Հեղինե Բիշարյանը պնդում էր, որ պետք է դատական իշխանության 100 տոկոսանոց բարձրացումը հավասարաչափ բաշխել նաև օրենսդրի և գործադրի միջև. «Խնդրում եմ լռեք. ում աշխատավարձ պետք չի, թող դահլիճից դուրս գա... բոլոր ելույթները թույլ են տալիս հասկանալ, որ գրեթե չկա խմբակցություն և պատգամավոր, որը կողմ լինի այդ նախաձեռնությանը: Այս ամենը խոսում է այն մասին, որ կա անարդարություն»: Այսուհանդերձ, խմբակցությունը որոշել էր քվեարկելիս անարդարությանը մեղմորեն վերաբերվել. «մեր մոտեցումը սրա նկատմամբ, առնվազն, կլինի ձեռնպահ»:

«Օրինաց երկիրը» իր նախընտրական ծրագրում կարևորում է իշխանության ճյուղերի հստակ տարանջատումը՝ «բացառելով ճյուղերից որևէ մեկի կողմից մենաշնորհի հաստատումը»:

- **«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն**

ԲՀԿ-ի ներկայացուցիչը փորձում էր շեշտադրումը տեղափոխել նախագծով առաջարկվող փոփոխության մոտիվացիայի վրա. «Կառավարության հիմնական փաստարկն այն է, որ, բարձրացնելով դատական համակարգի դատավորների աշխատավարձը, նվազեցնելու են կոռուպցիոն ռիսկերը»: Բանախոսը կասկածով էր վերաբերվում առաջարկվող ճանապարհի արդյունավետությանը. «Դուք իսկապես հավատո՞ւմ եք, որ աշխատավարձերը նույնիսկ 100 տոկոսով բարձրացնելու դեպքում կոռուպցիան ձեր նշած համակարգերում նվազելու է»:

«Բարգավաճ Հայաստանը» իր նախընտրական ծրագրում դատավորի անկախության և անկողմնակալության երաշխավորման համար հարկ է համարում ստեղծել նրա անձեռնմխելիության և անփոփոխելիության իրավական և սոցիալական հիմքեր՝ դրանք հավասարակշռելով պատասխանատվության ապահովման գործուն մեխանիզմներով:

▪ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն

ՀՅԴ ներկայացուցչի կարծիքով՝ դատավորների և դատախազների աշխատավարձերի սահմանումն ամեն տարի տեղափոխելով պետական բյուջեի նախագիծ, համակարգն էլ ավելի քաղաքականացնելու հնարավորություն է ստեղծվում, ինչը հակասում է իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքին. «Պետք է գիտակցենք, որ այս օրենքի ընդունման դեպքում մենք ավելի խոցելի ենք դարձնում մեր դատական համակարգը, ավելի վնաս ենք տալիս մեր երկրի արդարադատության իրականացմանը»: Նշելով, որ աշխատավարձերի բարձրացումը պետք է լինի համամասնորեն՝ ՀՅԴ ելույթ ունեցողը գործընկերներին մեղադրեց քննարկումը քաղաքական շոու դարձնելու մեջ և կոչ արեց «հանրային ծառայության վարձատրության միասնական ռազմավարության շրջանակներում ստեղծել օրենսդրական փաթեթ և 2009թ. ընթացքում ապահովել արժանապատիվ աշխատավարձ թե՛ ղեկավար աշխատողների, թե՛ քաղաքացիական ծառայողների համար, իսկ նվազագույն աշխատավարձի ուղղությամբ իրականացնել կոալիցիոն հուշագրում ամրագրված կարևոր սկզբունքը՝ կենսասպահովման նվազագույն բյուջեն դնելով հիմքում»:

«Հայ հեղափոխական դաշնակցությունը» նախընտրական ծրագրում կարևորում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի լիարժեք կենսագործումը, իսկ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարում, ի թիվս այլ քայլերի, կարևորում է պետական պաշտոնյաների, նրանց ընտանիքների արժանավայել կենսամակարդակը ապահովող աշխատավարձի սահմանումը:

▪ «Հանրապետական» խմբակցություն

Խմբակցության ղեկավարի կարծիքով, նախագիծը ներկայացված է դատախազական համակարգի բարեփոխումների ծրագրի շրջանակներում. այլ բաղադրիչների կողքին, նախատեսվում է նաև աշխատավարձերի բարձրացում, քանի որ «Լավ գործիքը մեծ փողերով են առնում, ընդ որում, և՛ կառավարության աշխատող, և՛ պատգամավոր, և՛ դատախազական համակարգ»: Իսկ ծավալված բուռն քննարկումների պատճառը, ըստ բանախոսի, այն է, որ կառավարությունը խորհրդարանում պատշաճ աշխատանք չի տարել նախագիծը ներկայացնելուց առաջ, սակայն «մեր գործը ոչ թե պետք է կատարենք այն տեսանկյունից, որ շատ խիստ վիրավորված ենք, այլ պետք է քաղաքական հավատամքին հետևենք»:

«Հանրապետականի» նախընտրական ծրագրում դատական համակարգի կայացման համար կարևորվում են դատական համակարգի կառուցվածքի և գործունեության համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին, դատախազության գործունեության սկզբունքների արմատական վերանայումը:

▪ «Ժառանգություն» խմբակցություն

«Ժառանգությունը» դեմ էր աշխատավարձի բարձրացմանը՝ հետևյալ հիմնավորմամբ. «Մարտի 1-ին հաջորդած խայտառակ դատավարությունների ֆոնի վրա, առանց քննարկելու այդ համակարգի վիճակը, առանց քննության առարկա դարձնելու բազմաթիվ դատավորների պահվածքը, մենք, կարծես թե, խրախուսում ենք նախատեսում այդ ամբողջ համակարգի նկատմամբ»: Խմբակցության տեսակետը ներկայացնողը դեմ էր նաև աշխատավարձերի հատվածական բարձրացման սկզբունքին. «մինչ այս օրինագիծը հեռավոր հույսեր էի փայփայում, որ կգա մի օր, երբ ոչ միայն բոլորի աշխատավարձերը փոխկապված կլինեն, այլև բոլորի աշխատավարձերի բարձրացման գործակիցները փոխադարձաբար կապված կլինեն նվազագույն աշխատավարձի հետ, որ եթե մենք ցանկանում ենք ղեկավար պաշտոններից որոշակի պաշտոնների դրույքաչափերը բարձրացնել՝ աշխատավարձերի մասով, ապա առաջին քայլը անենք հասարակության շարքային անդամից»:

«Ժառանգությունը» նախընտրական ծրագրում կարևորում է դատավորների և դատախազների նշանակման, առաջխաղացման ընթացակարգի հստակեցումը և ոլորտի թափանցիկության ապահովումը, իսկ կոռուպցիայի դեմ պայքարի կայացմանը, ինչպես նշված է ծրագրում, կնպաստի անկախ դատախազական վերահսկողությունը:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Արա Չոհրաբյան

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ

«ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ գործող օրենքն ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին, ուժի մեջ է մտել 2003թ. հուլիսի 1-ին: Օրենքում կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի և Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնային դրույքաչափը սահմանվել է համապատասխանաբար 680.000 և 600.000 ՀՀ դրամ՝ նախկին 340.000 և 300.000 ՀՀ դրամի փոխարեն: Ընդհանուր իրավասության, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների (նախագահների) աշխատավարձերի չափերի սահմանման հարցը Օրենքի կարգավորման ոլորտից դուրս է եկել և փոխանցվել «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքին: Որպես հիշատակված փոփոխությունների հիմնավորում նշվել է ՀՀ կառավարության հակակոռուպցիոն քաղաքականությունը:

Եթե ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի և դատավորների պաշտոնային դրույքաչափերի բարձրացումն ընդհանուր առմամբ կարելի է

դրական գնահատել, ապա դժվար է նույնը պնդել փոփոխությունների մյուս մասի առիթով:

Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու կամ այլ ձևակերպմամբ՝ դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը բարձրացնելու համար անհրաժեշտ են համարվում հետևյալ գործողությունները՝

- պրոֆեսիոնալ դատավորների ներգրավում,
- դատավորի կենսապայմանների բարելավում,
- դատավորի անկախության ապահովում,
- դատավորի պատասխանատվության հիմքերի և կարգի հստակեցում,
- հասարակական արդի հարաբերություններին օրենսդրության համապատասխանեցում:
-

Այս հինգ բաղադրիչների մեջ չի ներառվել հասարակության իրավագիտակցության բարձրացմանն ուղղված պետության հիմնական պարտականությունը, ինչը կանոնների կանոնն է: Ակնհայտ է, որ իրավագիտակցության ցածր մակարդակ ունեցող հասարակությունը չի կարող հստակ գիտակցել դատարանի դերը, ավելին՝ չի կարող իր վարքագիծը համապատասխանեցնել օրենքների, կարգադրագրերի պահանջներին: Հետևաբար՝ սրանով էլ պայմանավորված՝ իրավախախտումներն ավելացել և ավելանալու են:

Օրենքի փոփոխությունները փաստորեն ուղղվել են վերոհիշյալ բաղադրիչներից երկրորդի՝ դատավորների կենսապայմանների բարելավմանը: Մինչդեռ, փոփոխությունների արդյունքում ոչ միայն չի հստակեցվել, որ դատավորների աշխատավարձերը բարձրացվել են, այլ նաև վտանգի տակ է դրվել վերոհիշյալ երրորդ բաղադրիչը՝ դատավորների անկախությունը:

Պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ է մտնում տվյալ տարվա հունվարի մեկից և սովորաբար գործում է մինչև այդ տարվա ավարտը, բացառությամբ այն դեպքերի, երբ հաջորդ տարվա պետբյուջեի մասին օրենքը չի ընդունվել: ՀՀ Սահմանադրության 76-րդ և 89-րդ հոդվածների համաձայն՝ պետական բյուջեն հաստատում է Ազգային ժողովը՝ կառավարության ներկայացմամբ:

Վերոհիշյալից հետևում է, որ դատական իշխանությունն ուղղակիորեն կախվածության մեջ է ընկնում գործադիր իշխանությունից՝ կառավարությունից: Տեսականորեն հնարավոր է, որ դատարաններից դժգոհ կառավարությունը փորձի օգտվել դատավորների պաշտոնային դրույքաչափերը ուղղակիորեն չբարձրացնելու կամ էլ գործող դրույքաչափից ցածր դրույքաչափ սահմանելու իր հնարավորությունից: Դիշտ է, ցածր դրույքաչափը գործող դատավորների համար որևէ հետևանք չի առաջացնի (ՀՀ դատական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները չեն կարող պակասեցվել նրա պաշտոնավարման ընթացքում),

սակայն նոր նշանակվող դատավորների համար կարող են ունենալ բացասական հետևանքներ:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Վկայակոչված սկզբունքի համաձայն՝ օրենսդիրը չպետք է կախված լինի գործադիրից, գործադիրը՝ դատականից և հակառակը: Այս երեք իշխանությունների միաձուլումը վտանգում է իրավական պետության գաղափարախոսությանն ընդհանրապես, և դրանց բաժանման ու հավասարակշռման լիարժեք ապահովումն է միայն որակական փոփոխությունների երաշխիք դառնում: Որպես օրինակ, պատկերացնենք հետևյալ իրավիճակը. Ազգային ժողովն ընդունել է օրենք, այսինքն սահմանել է պարտադիր վարքագծի կանոններ՝ սեփականության իրավունքի հետ կապված հարաբերություններում: Գործադիր իշխանությունն, ի դեմս մարզպետի, ի հակասում այդ օրենքի, որոշում է կայացրել և անձին գրկել սեփականության իրավունքից: Այս դեպքում քաղաքացին կարող է դիմել դատարան, դատարանն իր հերթին կարող է անվավեր ճանաչել մարզպետի որոշումը: Հենց այս բաժանման և հավասարակշռման չափանիշների պահպանումն է, որ երաշխավորում է մարդու իրավունքների պաշտպանությունը:

Այսպիսով, Օրենքում կատարված փոփոխությունները խախտում են ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով երաշխավորված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, քանի որ կաշկանդում են դատարաններին՝ անդամների աշխատավարձը սահմանելու մեջ մեծ դերակատարում ունեցող մարմնի հանդեպ:

«Գատախազության մասին» գործող օրենքն ընդունվել է 2007 թվականի փետրվարի 22-ին, ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 21-ին: «Գատախազության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները նույնպես դատախազի պաշտոնային դրույքաչափի սահմանումը փոխանցում են «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի կարգավորմանը:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով: Սահմանադրական վերոհիշյալ նորմից և «Գատախազության մասին» ՀՀ օրենքից հետևում է, որ դատախազությունն անկախ է գործադիր, օրենսդիր և դատական իշխանություններից:

««ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի շուրջ բերված վերոհիշյալ փաստարկները վերաբերելի են «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքին, քանի որ դատախազությունը նույնպես կախվածություն է ունենում գործադիր իշխանությունից:

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Ընդունվել է 05.02.2009 թ.

Կողմ 81

Դեմ 6

Ձեռնպահ 3 (անկախ պատգամավորներ և Արծվիկ Մինասյան)

«Հանրապետական» խմբակցություն	կողմ
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	կողմ
«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն	կողմ
«Օրինաց երկիր» խմբակցություն	կողմ
«Ժառանգություն» խմբակցություն	դեմ

2009 թվականի փետրվարի 5-ին քառօրյա լիարժեք Ազգային ժողովի կողմից ընդունված դատախազական փաթեթը փոփոխություններ ու լրացումներ էր նախատեսում միանգամից հինգ օրենսգրքերում՝ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում», «ՀՀ դատական օրենսգրքում», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում» և «Սնանկության մասին» ՀՀ օրենքում:

Կառավարությունը փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորեց ընթացող դատախազական բարեփոխումներով, որոնց նպատակը, ինչպես խորհրդարանում ներկայացվեց, դատական համակարգի անկախության ու ինքնակառավարման սկզբունքի ամրապնդումն է:

Փոփոխությունների առանցքում մասնագիտացված դատարանների լուծարման խնդիրն էր: Ինչպես նշեց արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը, մասնագիտացված դատարանների գործունեությունը համեմատաբար կարճ ժամանակահատվածում ցույց տվեց, որ «որանք խիստ խոցելի են դարձրել արդարադատության մատչելիության սկզբունքը, ինչը դրսևորվում է դատական ատյանների անհավասարաչափ ծանրաբեռնվածությամբ, դատարան դիմելիս կողմերի համար անհիմն խոչընդոտների առկայությամբ, վճռաբեկ բողոքները քննարկման ընդունելու ակնհայտ անհիմն հիմքերի նախատեսմամբ և այլն»:

Մասնագիտացված դատարանները Հայաստանում սկսեցին գործել 2008 թվականի հունվարի մեկից: Մեկ տարին բավարար եղավ դրանց գործունեությունն անարդյունավետ ու վերանայման ենթակա գնահատելու համար:

Այս փաթեթով ընդունվեց նաև այն փոփոխությունը, որի համաձայն դատարանի կիրառած սանկցիայի արդյունքում դատավարությունը կարող է շարունակվել առանց ամբաստանյալի ներկայության, փոխարենը պարտադիր է համարվում պաշտպանի ներկայությունը: Փոփոխության այս առաջարկն ուղղակիորեն համընկավ այն ժամանակահատվածի հետ, երբ ընդհանուր իրավասության դատարաններում քննվում էին մարտի 1-ի իրադարձությունների առիթով հարուցված քրեական գործերը:

Արդարադատության նախարարի հիմնավորումների համաձայն, սակայն, փոփոխությունը նախապատրաստվել էր ավելի վաղ, քաղաքական ենթատեքստ չունենալով և բխում էր հիմնականում հետևյալ նկատառումից. «ամբաստանյալի կողմից պարբերաբար ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելը վտանգի տակ է դնում գործի՝ ողջամիտ ժամկետում քննելու հնարավորությունը, ինչի արդյունքում խախտվում են ինչպես իր՝ ամբաստանյալի, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցների իրավունքները»:

Խմբակցությունների տեսակետները

Քննարկվող փաթեթի շուրջ խմբակցությունները, բացառությամբ «Ժառանգության», տեսակետներ չեն ներկայացրել, ելույթ են ունեցել «Ժառանգության» պատգամավորները և ՀՅԴ-ից Արծվիկ Մինասյանը, ով սեփական մոտեցումներն է ներկայացրել:

«Ժառանգություն» խմբակցության անունից Արմեն Մնարտիրոսյանը խոսեց պետական միջոցների վատնման մասին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեկ տարի առաջ ստեղծված մասնագիտացած դատարանները լուծարվում են, իսկ այդ լուծարումն արդեն միջոցների վատնում է նշանակում: «Ժառանգության» ներկայացուցիչը ամբաստանյալի հեռացման դատական սանկցիան իրավիճակային լուծում համարեց: «Ամբաստանյալի ներկայությունը պարտադիր է դատավարության ընթացքում» - պնդում էր «Ժառանգության» ներկայացուցիչն ու առաջարկում այլընտրանքային այլ պատժամիջոց կիրառել:

Նախընտրական ծրագրերում խորհրդարանական բոլոր կուսակցությունները դատաիրավական ոլորտին անդրադարձել են ընդհանրական ու հոչակագրային ձևակերպումներով: Նախընտրական ծրագրերում բացակայում են հայեցակարգային մոտեցումները, հստակ պատկերացումը՝ ինչ ունենք և ինչն ու ինչպես է պետք փոխել: «Դատական համակարգի կառուցվածքի ու գործունեության համապատասխանեցում եվրոպական չափանիշներին»՝ առանց մանրամասնելու, թե այդ համապատասխանեցումն ինչպես է պատկերացնում,

նախընտրական ծրագրում նշել է ՀՀԿ-ն: «ՀՀ դատական համակարգի գործունեությունը պետք է հիմնված լինի արդարադատության հրապարակայնության և թափանցիկության ապահովման վրա»՝ հռչակել է ԲՀԿ-ն: ՕԵԿ-ն իր ծրագրի «Իրավունք և օրինականություն» բաժնում խիստ հակիրճ նշել է. «Իրավական բարեփոխումների իրականացում, արդար դատական պաշտպանության ապահովում»: Փոքր-ինչ տարբերվում է «Ժառանգության» նախընտրական ծրագիրը, որտեղ որոշակի չափորոշիչներ են ներկայացվել:

Նախընտրական ծրագրերում ոլորտին վերաբերող հռչակագրային ձևակերպումներն են, թերևս, պատճառը, որ օրենսդիրը դատաիրավական բարեփոխումներին մոտենում է ոչ թե սեփական մոտեցումների ու հայեցակարգային լուծումների, այլ կառավարության քաղաքականությունը վերահաստատողի դիրքերից:

P.S. Ազգային Ժողովում դատավորների աշխատավարձի բարձրացման հարցն ավելի բուռն քննարկվեց, քան օրենսդրական փոփոխությունները, որոնցով վերացվեցին ընդամենը մեկ տարի առաջ նույն պատգամավորների քվեարկության արդյունքում ստեղծված մասնագիտացված դատարանները: Երկրի համար կարևոր այս ոլորտին վերաբերող օրենքները, կարելի է ասել, ընդունվեցին մեխանիկորեն՝ այնպես, ինչպես մեկ տարի առաջ ընդունվել էին նույն խորհրդարանի նույն պատգամավորների կողմից:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Արա Չոհրաբյան

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ

Ազգային Ժողովի կողմից փետրվարի 5-ին ընդունված փաթեթը ներառում էր «ՀՀ **քաղաքացիական** դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ **վարչական** դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «ՀՀ **քրեական** դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ **դատական** օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքները:

Փորձագիտական գնահատականները ներկայացնենք դրանցից յուրաքանչյուրն առանձին դիտարկելով.

1. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) կատարված փոփոխությունները դատարանակազմական և զուտ դատավարական-ընթացակարգային բնույթի են: Դրանք ըստ էության ուղղված էին՝

- քաղաքացիական դատարանի լուծարմանը,
- գործը դատաքննության նախապատրաստելու կանոնները բոլոր ընդհանուր իրավասության դատարաններում պարտադիր կիրառմանը,
- վերաքննիչ դատարանի որոշումները՝ կայացման պահից մինչև ուժի մեջ մտնելը, մեկամսյա ժամկետում բողոքարկելու ինստիտուտի վերականգնմանը:

Դատարանակազմական բնույթի փոփոխություններ

Դատարանակազմական փոփոխություններով de jure և de facto լուծարվեցին առաջին ատյանի դատարան հանդիսացող մասնագիտացված քաղաքացիական դատարանները (այսուհետ՝ Քաղաքացիական դատարան), ինչը կարելի է ռացիոնալ քայլ համարել՝ պայմանավորված քաղաքացիական դատարանի ինստիտուտի անարդյունավետությամբ:

Քաղաքացիական դատարանը դժվար էր դիտարկել որպես մասնագիտացված դատարան, քանի որ այն ընդամենը քննում էր կամայականորեն առանձնացված քաղաքացիական իրավահարաբերություններից բխող որոշ գործեր: Այսպես. մի դեպքում ընդդատության որոշման հիմքում կարող էր դրվել բարձր հայցագինը, մյուս դեպքում՝ պատվի, արժանապատվության հարցին կամ գործարքի անվավերությանը վերաբերելը և այլն:

Քաղաքացիական դատարանը այս ինստիտուտի ավանդական էությունից շեղվել էր ոչ միայն առարկայական ընդդատության, այլ նաև կադրային քաղաքականության մասով: Մասնագիտացված դատարանի դատավորներին պետք է ներկայացվեն այլ չափանիշներ, քան ընդհանուր իրավասության դատարանների դատավորներին (օրինակ՝ աշխատանքային փորձը կամ էլ մասնագիտացված գործերի մասով դատավորների գիտելիքները (գիտելիքները կարող էին ստուգվել քննությունների կամ թեստերի միջոցով), հակառակ պարագայում մասնագիտացված դատարանը չի կարող ծառայել ստեղծման նպատակին:

Մի կողմ թողնելով վիճակագրական տվյալները, որոնք ըստ էության ներկայացվել են որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխությունների և լրացումների հայեցակարգի հիմնավորում, հարկ է անդրադառնալ Քաղաքացիական դատարանի, այսպես կոչված, «արհեստածին» լինելուն:

«Արհեստածին» լինելն առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ ինչպես շատ դեպքերում, այս դեպքում ևս բացակայում էր օրենսդրական փոփոխության իրական և ճիշտ չափորոշիչ հանդիսացող գործոնը՝ սոցիալական պահանջումները: Այլ կերպ՝ Քաղաքացիական դատարանը ստեղծելիս հաշվի չէր առնվել այն կարևոր հանգամանքը, թե արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում առկա է մասնագիտացված քաղաքացիական դատարանի

ստեղծման անհրաժեշտությունը, այն էլ՝ դրա ընդդատությանը վերապահված գործերի շրջանակով:

Նման ընդդատությամբ Քաղաքացիական դատարանի արհեստածին լինելու հանգամանքը հիմնավորվում է նաև ներկայացված վիճակագրական տվյալներով, ինչից կարելի է ուղղակիորեն եզրակացնել, որ մեր իրավական պրակտիկայում Քաղաքացիական դատարանի ընդդատությանը վերապահված քաղաքացիական գործերն այնքան էլ շատ չեն: Ավելին՝ դրանք չունեն որևէ էական տարբերություն քաղաքացիաիրավական մյուս գործերի համեմատությամբ, քանի որ դրանց բոլորի համար ընդհանուր հիմք են հանդիսանում մասնավոր բնույթը, դիսպոզիտիվությունը և քաղաքացիաիրավական իրավունքի ելակետային դրույթները (սկզբունքները):

Դատավարական բնույթի փոփոխություններ

Դատաքննությանը նախապատրաստելու դատավարական փուլի մասով.

Դատավարական փոփոխությունների առումով ձեռքբերում կարելի է համարել գործը դատաքննության նախապատրաստելու դատավարական փուլի պարտադիր լինելը: Դատավարական փուլում կատարվող գործողությունները հիմք են հանդիսանում գործի ամբողջական քննության համար:

Ավելին՝ դատավարական այս փուլի ներմուծումն ունի նաև պրեվենտիվ (կանխարգելիչ) բնույթ: Այն դատարանին արգելում է գործին մասնակցող անձանց վրա որոշակի փաստերի հաստատման մասով ապացուցման բեռ դնել, եթե դրանք, որպես ապացուցում պահանջող փաստեր, դատաքննության նախապատրաստելու դատավարական փուլում չեն քննարկվել, և դրանց կապակցությամբ ապացուցման պարտականության (բեռի) բաշխում դատարանի կողմից չի կատարվել:

Սահմանելով նման իրավակարգավորում, ըստ էության, դատավարության սուբյեկտը իրավական ֆորմալիզացիայի մակարդակով հնարավորություն է ստանում չկրելու բացասական հետևանքներ այն փաստի չապացուցման համար, որը, որպես ապացուցում պահանջող փաստ, դատարանի կողմից քննարկման առարկա չի դարձել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Նախապատրաստական փուլի համար ներմուծված մյուս կարևոր սկզբունքը բոլոր «խաղաթղթերի» բացահայտումն է: Այսինքն, օրենսդիրը պարտավորեցրել է կողմերին նախապատրաստական փուլում ներկայացնել իրենց տնօրինության տակ գտնվող բոլոր ապացույցները:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի՝ հրապարակումից մեկ ամիս հետո օրինական ուժի մեջ մտնելու մասով.

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) դատական ակտերի՝ օրինական ուժի մեջ մտնելու համար իրավասահմանող ժամկետի նախատեսումն իրավաչափ է: Մասնավորապես, այդ կերպ հնարավոր կլինի խուսափել դատական ակտերի շրջադարձի իրավական կարգավորման մեխանիզմի իրացումից: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման համար պետք է սահմանվեն իրավագիտորեն հիմնավորված բացառիկ դեպքեր, հակառակը կարող է հանգեցնել իրավակարգի խաթարմանը:

Չնայած այն հանգամանքին, որ փոփոխությունների հիմնավորման համաձայն՝ Օրենքի նպատակը արդարադատությունը մատչելի դարձնելն է, յուրաքանչյուրի՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված դատական պաշտպանության իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացումը, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանի մատչելիությանն ուղղված որևէ փոփոխություն չի կատարվել:

Վճռաբեկ բողոքների մեծ մասը վերադարձվում է, ընդ որում, ստանդարտ (ստորադաս ատյանի դատական ակտի պատճառաբանությունների որոշ մեջբերումներով) հիմնավորումներով, անդրադարձ չի կատարվում կոնկրետ փաստարկներին: Այս պայմաններում դատական բարձրագույն ատյանում մեծանում է կոռուպցիոն ռիսկը, քանի որ ոչ բոլոր հիմնավոր բողոքներն են ընդունվում և ոչ բոլոր անհիմն բողոքներն են վերադարձվում:

Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքների ընդունման հարցում հայեցողական լայն լիազորությունը չի ապահովում դատական մատչելիության իրավունքը: Դիշտ կլիներ, որ Օրենքը կարգավորեր նաև վճռաբեկ դատարան դիմելու հետ կապված վերոհիշյալ հարցերը:

Այլ դիտողություններ և առաջարկություններ

Օրենքի ընդունման հիմնավորման համաձայն՝ դրանով ապահովվում է յուրաքանչյուր անձի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը բոլոր դատական ատյաններում և արդարադատության մատչելիության իրավունքը:

Այս հիմնավորման ոգուն համահունչ Օրենքը չի կարգավորել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման կարևորագույն գործոնի՝ ժամկետի հարցը:

Գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատարանում պետք է քննվի և վճիռ կայացվի **ողջամիտ** ժամկետում (*նախկինում սահմանված էր երկամսյա ժամկետ*): Ողջամիտ ժամկետի «ներմուծումից» հետո, բոլոր քաղաքացիական գործերն սկսեցին ձգձգվել (միջինը՝ 3-7 ամիս)՝ հարուցելով հանրության արդարացի դժգոհությունը: Նման «դանդաղ» արդարադատությունը ոչ բոլորի համար է

գրավիչ, և իր հերթին կարող է նպաստել վեճերն արտադատական ու անօրինական ճանապարհով լուծելուն:

Օրենսդիրը նաև պետք է ուշադրության առարկա դարձներ գործերի բաշխման կարգը, ինչպես առաջին, այնպես էլ վերադաս ատյաններում: Գործող կարգի համաձայն՝ գործերը բաշխում է, դատարանի նախագահը, ինչը որոշակի առումով կախվածության մեջ է դնում դատավորին՝ նույն դատարանի նախագահից: ԱՄՆ դատական համակարգում գործերի բաշխումը կատարվում է հիմնականում համակարգչի կողմից՝ հատուկ ծրագրով, որը հաշվի է առնում նաև դատավորների ծանրաբեռնվածությունը:

2. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) կատարվել են զուտ դատավարական-ընթացակարգային բնույթի փոփոխություններ:

Վարչական դատարանի վճիռները, որոնք հրապարակման պահից ուժի մեջ էին մտնում, Օրենքով կատարված փոփոխության համաձայն ուժի մեջ են մտնելու հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Այս փոփոխությունը դրական է և պայմանավորված է ՀՀ Սահմանադրական դատարանի 25.11.2008թ. թիվ 78-ՍԳՌ որոշմամբ, որով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը (*այս մասն է Օրենքով փոփոխվել*) և 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր: Սակայն օրենսդիրը հաշվի չի առել ՀՀ Սահմանադրական դատարանի 25.11.2008թ. թիվ 78-ՍԳՌ որոշման մեջ նշված մյուս «անհանգստությունները»:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 25.11.2008թ. թիվ 78-ՍԳՌ որոշմամբ մասնավորապես նշվել է հետևյալը՝

- **13-րդ կետ, չորրորդ պարբերություն՝** «Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաքննիչ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ այն նույն հիմքերի և ընդունելիության պայմանների սահմանում, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում»:
- **13-րդ կետ, հինգերորդ պարբերություն՝** «Միաժամանակ, ընդունելով, որ ՀՀ դատական օրենսգրքով ստեղծված տարբեր մասնագիտացված առաջին ատյանի դատարանների միջև՝ վարչական դատարանի ակտերի վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելու առումով տարբերակված մոտեցումն իր հիմքում ունի որոշակի օբյեկտիվ արդարացում, այն է՝ վարչական դատարանի քննությանը ենթակա գործերի բնույթը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման տարբերակված մոտեցումը պահանջում է նաև տարբերակված մոտեցում վարչական ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավակարգավորումը սահմանելիս»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգի, հիմքերի և գործերի վարույթը վճռաբեկ դատարանում իրականացնելու վրա (mutatis mutandis) տարածվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Ինչպես տեսնում ենք, այս նորմը ևս հակասում է ՀՀ Սահմանադրությանը և ճանաչվել է անվավեր: Եվ բնական է, որ օրենսդիրը պարտավոր էր ՀՀ վարչական դատարանի վճիռների դեմ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի և ընդունելիության պայմանների նոր՝ տարբերակված մոտեցում սահմանել, ինչը, սակայն, չի արվել: Այս պայմաններում ՀՀ վարչական դատարանի վճռի դեմ բողոք բերողի դատական մատչելիության իրավունքն էլ ավելի է սահմանափակված:

3. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում կատարված փոփոխությունները նույնպես դատարանակազմական և զուտ դատավարական-ընթացակարգային բնույթի են:

Դրանք ըստ էության ուղղված են՝

- քրեական դատարանի լուծարմանը,
- ամբաստանյալի նկատմամբ՝ դատական նիստերի դահլիճից հեռացնելու սանկցիայի կիրառմանը,
- վերաքննիչ դատարանի որոշումները կայացման պահից մինչև ուժի մեջ մտնելը մեկամսյա ժամկետում բողոքարկելու ինստիտուտի վերականգնմանը,
- վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման ժամկետների փոփոխությանը:

Դատարանակազմական բնույթի փոփոխություններ

Դատարանակազմական փոփոխություններով de jure և de facto լուծարվեցին առաջին ատյանի դատարան հանդիսացող մասնագիտացված քրեական դատարանները (այսուհետ՝ Քրեական դատարան), ինչն, ըստ էության, կարելի է ռացիոնալ քայլ համարել:

Քրեական դատարանի վերացման անհրաժեշտության պատճառներից մեկը կարծում ենք ձևավորված անընդունելի իրավակիրառական պրակտիկան էր: Դեռևս 2008թ. դեկտեմբերի 2-ի թիվ 782 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող ճանաչեց Հայաստանի

Հանրապետության դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը՝ նշելով, որ դրանք ուժը կորցրած կճանաչվեն 2009թ. մարտի 1-ից:

Սահմանադրական դատարանի որոշմամբ վերացվեց դատավորների գործուղման ինստիտուտը, ընդ որում ոչ թե վերջինի գոյության աննպատակահարմարությունը կամ ոչ իրավաչափ լինելը հաշվի առնելով, այլ՝ այս ինստիտուտի կիրառման պրակտիկան նկատի ունենալով:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը սույն որոշմամբ նշել է՝

ՀՀ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունից հետևում է, որ միայն 2008թ. փետրվար-սեպտեմբեր ամիսներին Հարավային քրեական դատարան են գործուղվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների 5, իսկ Հյուսիսային քրեական դատարան՝ 14 դատավոր: Վերջիններիս թիվն ավելի քան չորս անգամ գերազանցում է Հյուսիսային քրեական դատարանի դատավորների թիվը: ...

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման վիճակի պատճառը նաև ոչ հիմնավոր մոտեցումն է Հյուսիսային և Հարավային քրեական դատարանների կազմավորմանը: Մի դեպքում՝ նախագահի և երեք դատավորի, մյուս դեպքում՝ նախագահի և երկու դատավորի կազմով ստեղծված դատարանները փաստորեն ի սկզբանե ձևական բնույթ են կրել: ...

Դատարանակազմական ոչ հիմնավոր լուծումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճռաբեկ դատարանի նախագահը ձևավորել է մասնագիտացված քրեական դատարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընտրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից, իրավաչափ չէ ու նաև կոռուպցիոն ռիսկ է պարունակում:

Բացի այդ՝ կարծում ենք, որ բացակայում է նաև մասնագիտացված քրեական դատարանի առկայության սոցիալական անհրաժեշտությունը:

Դատավարական բնույթի փոփոխություններ

Ամբաստանյալի նկատմամբ «նիստերի դահլիճից հեռացնել» սանկցիան կիրառելու մասով փոփոխությունը, կարծում ենք, բացասական է:

Այս փոփոխությունը ոտնահարում է ամբաստանյալի՝ դեռևս անմեղ անձի, կենսական մի շարք իրավունքներ, այդ թվում՝ պաշտպանության իրավունքը՝ լսել իր դեմ ցուցմունք տվող վկաներին, հարցեր տալ նրանց և այլն: Դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող է հանցագործության մեջ մեղադրվող անձը ապացուցել իր անմեղությունը, եթե անգամ հնարավորություն չունի ներկա

գտնվել դատական նիստին և անմիջականորեն մասնակցել իր ճակատագրին վերաբերող գործի քննությանը:

Ինչ վերաբերում է այն ամբաստանյալներին, որոնք ակնհայտ չարաշահում են դատական նիստին մասնակցելու իրենց իրավունքը, ապա նրանց դեմ պայքարի արդյունքում չպետք է խախտվի բոլոր «ամբաստանյալների» իրավունքները և փոփոխվի վերջիններիս իրավական կարգավիճակը: Ի վերջո, փոփոխությունը իրավակիրառ պրակտիկայում հանգեցրել է նաև մի շարք այլ խնդիրների:

Նախ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (սույն կետում այսուհետ կհիշատակվի՝ Օրենսգիրք) 314.1 հոդվածի 6-րդ մասը իրավական անորոշության տարրեր է պարունակում: Մասնավորապես, ամբաստանյալին նիստերից հեռացնելու լրացուցիչ ընթացակարգ է նախատեսված¹ նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու կամ նախագահող դատավորի կարգադրությունները չկատարելու դեպքում, որը չի պահպանվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում:

Կարծում ենք, դատարանի կարգադրությունները չկատարելը անհարգալից վերաբերմունք է դատարանի նկատմամբ, ինչը գործնականում կարող է հանգեցնել «նախագուշացման» ընթացակարգի շրջանցման: Հետագա չարաշահումներից խուսափելու նպատակով ավելի ճիշտ կլիներ, եթե օրենսդիրը հստակեցներ, թե որն է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 6-րդ մասի իմաստով:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասը լրացվել է, ինչի արդյունքում նշված հոդվածը հետևյալ ձևակերպումն է ստացել:

Հոդված 69. Պաշտպանի պարտադիր մասնակցությունը

1. **Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝ 11) դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան:**
2. **Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է՝ 8) սանկցիան կիրառելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում:**
5. **Սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում դատարանը չի ընդունում պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է պաշտպան կամ պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները:**

Օրենսդրական տեխնիկայի կանոնների լույսի ներքո Օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասից հետևում է, որ այն սահմանված է միայն նշանակված պաշտպանի համար և նախատեսում է երկու այլընտրանքային հետևանք՝

¹ Կիրառել նախագուշացում, որից հետո կրկին խախտում թույլ տալուց հետո միայն հեռացնել նիստերի դահլիճից:

1. դատարանը չի ընդունում պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է պաշտպան,
2. դատարանը չի ընդունում պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները:

Պաշտպանի նշանակված լինել կամ չլինելու հետ կապված հարցերը բացահայտվում են Օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով առ այն, որ փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝

- 1) կասկածյալի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, ազգականի, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի խնդրանքով կամ համաձայնությամբ՝ այլ անձանց հրավերով,
- 2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:

Վերոհիշյալ նորմից հետևում է, որ պաշտպանը նշանակվում է միայն ՀՀ փաստաբանների պալատի կողմից: ՀՀ փաստաբանների պալատն իրավասու է պաշտպան նշանակել միայն այն փաստաբաններին, ում հետ գտնվում է աշխատանքային իրավահարաբերությունների մեջ, իսկ այն փաստաբաններին, ովքեր միայն պալատի անդամներ են , չի կարող որևէ հանձնարարություն տալ, և վերջիններս կարող են ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:

Այս հարցերը թերի են կարգավորվել, ավելին՝ Օրենքով չի հստակեցվել մեղադրյալի համաձայնությամբ ներգրավված պաշտպանի հետ համաձայնությունը լուծելու ժամանակ դատավարության ընթացքն այն դեպքում, երբ ամբաստանյալը հեռացված է նիստերի դահլիճից: Օրենսդրական այս բացերը ակնառու կերպով բացահայտվեցին «7-ի գործով» ընթացող դատավարությունների ժամանակ:

4. Անդրադառնալով «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) կատարված փոփոխություններին՝ նշենք, որ այս դեպքում էլ դրանք դատարանակազմական և զուտ դատավարական-ընթացակարգային բնույթի են:

ՀՀ դատական օրենսգիրքն իր կառուցվածքով կարգավորում է դատարանակազմական և դատավարական-ընթացակարգային հարաբերությունները: Հավանաբար այդ է պատճառը, որ Օրենքը որոշ կրկնություններ է կատարել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքներից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի (Օրենսդրական տեխնիկայի այլ կանոններ) 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերում **պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները:**

Օրենսդրական տեխնիկայի այս կանոնի լույսի ներքո ՀՀ դատական օրենսգիրքը դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ դատավարական-ընթացակարգային նորմեր այդ օրենսգիրքը չպետք է պարունակեն: ՀՀ դատական օրենսգիրքը պետք է կարգավորեր միայն դատարանակազմական (ներառյալ դատական համակարգի ինքնակառավարման հարցերը, դատավորների նշանակման, վերջիններիս պատասխանատվության ենթարկելու հարցերը և այլն) հարաբերությունները:

Օրենսդրական տեխնիկայի կանոնից այս շեղումը ստիպել է օրենսդրին ՀՀ դատական օրենսգրքում նույնությամբ կրկնել բոլոր այն դատավարական փոփոխությունները, որոնք կատարվելու են ՀՀ քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության օրենսգրքերում, եթե փոփոխվող դատավարական նորմն առկա է Դատական օրենսգրքում:

2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-2-ԻՆ ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱԶՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՅ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Համառոտ տեղեկանք

Հանձնաժողովի խնդիրը 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած բռնությունների, ինչպես նաև ոստիկանության գործողությունների իրավաչափության և համաչափության ուսումնասիրությունը, գոհվածների մահվան հանգամանքների ճշտումը, նման իրադարձությունների կրկնությունը բացառող քաղաքական, իրավական և այլ լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումն էր:

Մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության Ազգային Ժողովի ժամանակավոր հանձնաժողովը ստեղծվեց Ազգային Ժողովի որոշմամբ՝ 2008թ-ի հունիսի 16-ին: Հանձնաժողովը, ըստ որոշման, իրավունք ունի հարցումներով դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պարզաբանումներ ստանալու համար հրավիրել պաշտոնատար անձանց, իր աշխատանքում ներգրավել փորձագետներ (նաև միջազգային), այցելել կալանավայրեր: Հանձնաժողովի կազմում, համաձայն որոշման, ընդգրկվեցին 2-ական պատգամավոր խորհրդարանական խմբակցություններից, 1 անկախ պատգամավոր, արտախորհրդարանական ուժերի ներկայացուցիչներ: Հանձնաժողովի

որոշմամբ վերջինները հանձնաժողովում ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:

Նախագահը Սամվել Նիկոյանն է՝ «Հանրապետականից»: ՀՀԿ-ից հանձնաժողովում է նաև Հերմինե Նաղդալյանը, ՀՅԴ-ից՝ Արծվիկ Սինասյանը և Արտաշես Շահբազյանը, ՕԵԿ-ից՝ Հովհաննես Մարգարյանն ու Արծրունի Աղաջանյանը, ԲՀԿ-ից՝ Արամ Սաֆարյանն ու Նաիրա Զոհրաբյանը: Խորհրդարանական «Ժառանգությունը» հրաժարվեց մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: Չնայած որոշման նախագծի հեղինակը լինելուն՝ Վիկտոր Դալլաբյանը հրաժարվեց որպես անկախ պատգամավոր ընդգրկվել հանձնաժողովում: Որպես անկախ պատգամավոր հանձնաժողովի առաջին նիստին մասնակցեց Լևոն Խաչատրյանը, բայց հետո հրաժարվեց՝ բացատրելով, թե իր և Գլխավոր դատախազի մտերիմ հարաբերությունները կարող են շահարկման առարկա դառնալ: Նրանից հետո հանձնաժողովի աշխատանքներին, որպես անկախ պատգամավոր, մասնակցում է Սամվել Բալասանյանը:

Արտախորհրդարանական ուժերից հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են խորհրդարանական ընտրությունների ժամանակ 3%-ի արգելքը հաղթահարած ուժերը՝ ՍԱԿ, «Նոր ժամանակներ», ինչպես նաև՝ նախագահական ընտրություններին մասնակցած թեկնածուները կամ նրանց ներկայացուցիչները: Տիգրան Կարապետյանն ու Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարվեցին մասնակցությունից, Վազգեն Մանուկյանն ու Արտաշես Գեղամյանը ունեն ներկայացուցիչներ, «Ազգային համաձայնություն» կուսակցության ղեկավար Արամ Հարությունյանը մասնակցում է անձամբ:

Հանձնաժողովի գործունեության ժամկետը նախապես սահմանված էր 2008թ-ի հոկտեմբերի 25-ը: Այդ ընթացքում հանձնաժողովը պետք է Ազգային Ժողովին ներկայացներ եզրակացություն՝ կատարած աշխատանքի վերաբերյալ:

2008թ-ի հոկտեմբերի 22-ին հանձնաժողովի գործունեության ժամկետը, ԱԺ որոշմամբ, երկարացվեց մինչև 2009թ-ի փետրվարի 25-ը: Եվս մեկ անգամ այդ ժամկետը երկարացվեց 2009-ի փետրվարի 23-ին՝ մինչև սեպտեմբերի 15-ը: Այս անգամ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարացնելու առաջարկը ներկայացրեց հանրապետական Սուքիաս Ավետիսյանը, ով հանձնաժողովի անդամ չէր: Հիմնավորեց, թե հանձնաժողովը դեռ անելիք ունի, կան հարցեր, որոնց պատասխանները պետք է տրվեն, հետևաբար, հանձնաժողովին պետք է ժամանակ տալ՝ աշխատանքն ավարտելու համար:

Խմբակցությունների տեսակետներ

- «Հանրապետական» խմբակցություն

Հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանն ասաց, թե հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարացնելու հարցով հանդես է գալիս ոչ

հանձնաժողովական մեկը, որովհետև հանձնաժողովի աշխատանքների համար պատասխանատու են ոչ միայն դրանում ընդգրկվածները: Նիկոյանը նշեց, որ հանձնաժողովին ժամանակ է պետք վերջնական զեկույցի վրա աշխատելու համար, իսկ, որպեսզի զեկույցը ամբողջական լինի, իրենց ձեռքի տակ պետք է ունենան փաստահավաք խմբի եզրակացությունները: ՀՀԿ-ն կողմ էր, որ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարացվի:

▪ «Օրինաց երկիր» խմբակցություն

Խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանի կարծիքով հանձնաժողովի գործունեության ժամկետի երկարացումը բխում է բոլորի շահերից, քանի որ դա կօգնի աշխատել առանց շտապելու և անել անաչառ վերլուծություն: Ըստ նրա՝ յուրաքանչյուր քաղաքական ուժ այդ ժամանակահատվածում կարող է իր ներդրումն ունենալ հանձնաժողովի աշխատանքներում: Դա կօգնի «գտնել համագործակցության եզրեր՝ խուսափելով ծայրահեղ գնահատականներից»:

Ընդդիմադիր «Ժառանգությունը» հարցի քվեարկությանը չմասնակցեց: 95 պատգամավորներ կողմ էին, որ հանձնաժողովը շարունակի աշխատել մինչև սեպտեմբերի 15-ը, Վիկտոր Գալստյանը դեմ էր, Տիգրան Թորոսյանը՝ ձեռնպահ:

Հանձնաժողովն աշխատանքն սկսեց քրեակատարողական հիմնարկներ այցելելով և մարտի 1-ից հետո անազատության մեջ գտնվողներին հանդիպելով: Հատուկ դիտման ենթարկվեցին մարտի 1-ի մասին պատմող բոլոր տեսանյութերը, ինչից հետո հանձնաժողովը նիստին մասնակցելու հրավիրեց «Ա1+» հեռուստաընկերության օպերատորին: Վերջինիս չներկայանալու պատճառով հանձնաժողովի 1-2 նիստ չկայացավ: Մեկ ամսից ավել հանձնաժողովը նիստեր չէր գումարում մաս 2009-ի գարնանը: Այս անգամ չէր ներկայանում ՀՀ նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանը:

Նիստին, որին մասնակցեց «Ա1+»-ի օպերատոր Հովսեփ Հովսեփյանը՝ ցուցադրվեցին նրա կողմից մարտի 1-ին նկարահանված կադրերը: Դրանցում պատկերված էին լեռնացած արյան փոքրիկ լճակներ, ծնոտ, գանգ, ոսկորների կտորներ: Հանձնաժողովի՝ ավելի վաղ հրավիրված նիստին մասնակցած Դատաբժշկական փորձաքննության կենտրոնի տնօրեն Շոթա Վարդանյանը, ով նույնպես դիտել էր այդ կադրերը, պնդում էր, որ պատկերվածը ոչ թե մարդու, այլ կենդանու՝ խոճկորի և ոչխարի ոսկորներ են: Հովսեփ Հովսեփյանի նկարած կադրերով պատրաստված տեսաերիզը մարտի 1-ի ժամանակավոր հանձնաժողովին փոխանցել էր «Հայկական ժամանակի» լրագրողը: Շատ չանցած՝ հանձնաժողովը, ինչպես տեղեկացնում էր նախագահ Սամվել Նիկոյանը, անանուն մի ծրար էր ստացել՝ մեջը՝ դարձյալ տեսաերիզ: Սրանում մարտի 1-2-ին Լևոն Տեր-Պետրոսյանի և Ալիկ Արզումանյանի հեռախոսազրույցների գաղտնալսումներն էին, հայտնի իրադարձությունների

տեսանյութեր՝ «հակալեռնական» մեկնաբանություններով: Հանձնաժողովը տեսանյութը դիտեց և ընդամենը այսքանը:

Նիստերից մեկին էլ հանձնաժողովը հրավիրեց մարտի 1-ին Ֆրանսիական դեսպանատան դիմաց ձերբակալված 3 անձանց, ովքեր որպես ականատեսներ հարցաքննվել և բաց էին թողնվել: Նրանք պատմեցին, որ այդ գիշեր Մյասնիկյանի արձանի և դեսպանատան պատերի մոտ տեսել են բենզինով լցված շատ շշեր, մահակներ: Նրանցից մեկն էլ պնդում էր, որ Ֆրանսիական դեսպանատան պատին թափվածը, ինչպես երևում էր «Ա1+» -ի նկարահանած կադրերում, ոչ թե արյուն է, այլ բենզին: Ինքն, իբր, անզոռուշորեն շուռ էր տվել պատին շարված շշերից մեկը:

2008թ. հոկտեմբերի 3-ին Երևան ժամանեցին փորձագետներ Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Նրանք մասնակցել էին 2001թ-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչության գործն ուսումնասիրած հանձնաժողովի աշխատանքներին և Հայաստան էին եկել՝ փորձի փոխանակման նպատակով: Ի տարբերություն հայաստանյան հանձնաժողովի՝ ամերիկյանը կազմվել էր ոչ թե կուսակցականության, այլ բացառապես պրոֆեսիոնալիզմի սկզբունքով, և այդ հանձնաժողովի առաջարկով ցուցմունք էին տվել ամերիկյան բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները: Փորձի փոխանակումը, ըստ էության, չստացվեց, որովհետև պարզ դարձավ, որ Հայաստանի և ԱՄՆ-ի հանձնաժողովները գործել են միմյանցից տարբեր իրականության մեջ՝ ամերիկյան և հայկական:

2009թ. ապրիլի 30-ի նիստում հանձնաժողովին պարզաբանումներ ներկայացրեց ՀՀ նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանը: Նա տվեց 2008թ. մարտի 1-ից հետո շրջանառվող մի քանի հարցերի պատասխաններ և առաջ բերեց նոր հարցեր: Մասնավորապես, ասաց, որ մարտի 1-ին ցուցարարների վրա նպատակային կրակ չի արձակվել, իսկ ոստիկանության գործողությունները այդ օրը գնահատեց օրինաչափ և ոչ կոշտ: ՀՀ նախկին ոստիկանապետը հաստատեց, որ մարտի 1-ին գործել է հատուկ շտաբ, և ինքը եղել է այդ շտաբի անդամ: Արդյո՞ք շտաբը գործել է նախագահականում և ուրիշ ովքե՞ր են եղել այդ շտաբի անդամներ. այս հարցերի պատասխանը նախկին ոստիկանապետը չտվեց:

2008թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ նախագահը ստորագրեց հրամանագիր՝ մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրելու նպատակով փորձագետների փաստահավաք խումբ ստեղծելու մասին: Փաստահավաք խումբը պիտի աշխատեր հանձնաժողովից անկախ և ազատ, լրատվամիջոցների համար՝ փակ, և իր գտած փաստերն ու դրանց ուսումնասիրությունը պետք է ներկայացներ ժամանակավոր հանձնաժողովին: Խմբի ձևավորումը ողջունեց ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգը:

Փաստահավաք խմբում մեկ ներկայացուցիչ ունի ՀՀ նախագահը՝ Գևորգ Թովմասյան, մեկը՝ կոալիցիան՝ Ռորերտ Ավագյան, մեկը՝ Մարդու իրավունքների

պաշտպանը՝ Վահե Ստեփանյան: ՀԱԿ-ի ներկայացուցիչը Անդրանիկ Քոչարյանն է, «Ժառանգությանը»՝ Սեդա Սաֆարյանը: Խմբի ղեկավարը Վահե Ստեփանյանն է:

Ռոբերտ Ավագյանը, Գևորգ Թովմասյանը և Վահե Ստեփանյանը 2009թ. մայիսի 5-ին դադարեցրին իրենց աշխատանքը խմբում և որոշեցին մեկնել արձակուրդ՝ մինչև մայիսի 18-ը: Դա եղավ այն բանից հետո, երբ մամուլում հայտնվեց մարտի 1-ին գոհված Ոստիկանության գործերի սպա Համլետ Թադևոսյանի մահվան հանգամանքն երին վերաբերող զեկույցը: Վերոնշյալ 3 անդամները արձակուրդից այդպես էլ չվերադարձան, ինչին հաջորդեց ՀՀ նախագահի հրամանը՝ փաստահավաք խմբի գործունեության դադարեցման մասին:

Մարտի 1-ի հանձնաժողովը ամփոփիչ զեկույց կներկայացնի Ազգային ժողովի աշնանային նստաշրջանում: Այդ ժամանակ էլ կտրվի կատարված աշխատանքի վերջնական և մանրամասն գնահատականը, իսկ այսօր հանձնաժողովի անդամները, ովքեր դրանում ընդգրկվեցին որպես քաղաքական կռալիցիայի ներկայացուցիչներ, կարծում են, որ հանձնաժողովը արեց հնարավորը՝ իր առջև դրված խնդիրները լուծելու համար:

***ՎԵՐՉԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԿԱՄ
Հավատեսական հաշվետվություն լավատես ընտրողի համար***

Տրամաբանական և միանգամայն հիմնավոր է մոտեցումը, խորհրդարանը ձևավորած քաղաքական ուժերի գործունեությունը, կուսակցությունների հռչակած գաղափարների և ուղեգծի կենսունակությունը դիտարկվում և գնահատվում են հնգամյա օրինաստեղծ աշխատանքի ընթացքում դրսևորած մոտեցումներն ու դիրքորոշումները կուսակցությունների նախընտրական ծրագրերի հետ համեմատության մեջ: Տրամաբանական և հիմնավոր է թեկուզ միայն այն պարզ պատճառով, որ օրինաչափորեն քաղաքական ուժերին խորհրդարան ձգող մոտիվացիան սեփական ծրագրերն իրականություն դարձնելու հնարավորություն ստանալն է, ինչում, ի դեպ, նախընտրական շրջանում նրանք ջանադարաբար փորձում են համոզել ընտրագանգվածին:

Սակայն, ինչպես հաճախ է պատահում մեզանում, այս դեպքում էլ տրամաբանությունն ու օրինաչափությունը բախվում են իրականությանը և տեղի տալիս: Եթե առաջին տարվա ընթացքում, մեծ ջանքերի դեպքում կարելի է ինչ-ինչ գուզահեռներ, հղումներ գտնել խորհրդարանական գործունեության և նախընտրական ծրագրերի միջև, ապա երկրորդ տարվանից սկսած այս երկու իրողությունները հայտնվում են երկու տարբեր, չհատվող հարթություններում: Ճիշտ է, անարդար կլինի չնկատել նաև, որ 2008թ.-ի աշնան իրականությունը, երբ իր երկրորդ տարվա գործունեությունն էր սկսում 4-րդ գումարման խորհրդարանը,

մեղմ ասած, շատ էր տարբերվում 2007-ի գարնան իրականությունից, երբ հանրությանն էին հրամցվում կուսակցությունների նախընտրական ծրագրերը. նոր կուսիցիա և դրանից բխող միջկուսակցական նոր պայմանավորվածություններ, Եվրախորհրդի՝ մեկը մյուսին հաջորդող բանաձևեր, ներքաղաքական չթուլացող լարվածություն, տնտեսական ճգնաժամ....

Տարին, իրոք, սովորական չէր. խորհրդարանում այդ լարվածության /գուցե խուճապի/ խոսուն ցուցիչ է արագացված ընթացակարգով ընդունված օրենքների քանակությունը: Նման պայմաններում աշխատելու արդյունքում ընդունված օրենքները հաճախ ոչ միայն համահունչ չէին դրանց կողմ քվեարկած կուսակցությունների հռչակած սկզբունքներին, այլև երբեմն պարզապես հակասության մեջ էին /օր. ՕԵԿ-ի դիրքորոշումը ՀԳՄ-ների հարցում/: Անշուշտ, արդարացի կլինեն նաև նրանք, ովքեր կպնդեն, թե խնդիրը ծրագրերի կենսունակության և քաղաքական ուժերի սկզբունքայնության դեֆիցիտի մեջ է: Կարող է պատահել: Ամեն դեպքում, նախապատվությունը տալով մեղմ գույներին՝ պետք է արձանագրենք, որ 2008թ. աշուն-2009թ. գարուն ժամանակահատվածը ԱԺ-ն ձևավորած քաղաքական ուժերի համար՝ իրենց ծրագրերը կյանքի կոչելու առումով, լավագույն դեպքում՝ տարկետման տարի էր:

Այսուհանդերձ, սա հարցի մի կողմն է: Հետաքրքիր է նաև, թե ինչ օրենքներ էին ընդունվում, ինչ օրենսդրական փոփոխություններ էին կատարվում, ինչպես էր, ի վերջո, կատարելագործվում օրենսդրական դաշտը այդ լարված ժամանակահատվածում: Սակայն մինչ բովանդակությանն անդրադառնալը՝ մի փոքրիկ դիտարկում. այն, ինչ միանգամից աչքի է զարնում՝ հապճեպությունն է օրինաստեղծ գործընթացում: Արդեն նշել ենք, որ հաճախ էր կիրառվում արագացված ընթացակարգով օրենքներ ընդունելու պրակտիկան՝ սովորաբար առանց լուրջ հիմնավորումների: Բացի այդ, խորհրդարանում կարծես սովորույթ է ձևավորվում 1-2 ամիս ընդմիջումներով անդրադառնալ միևնույն օրենքներին՝ հերթական փոփոխություններով, որոնք երբեմն վերաբերում են միևնույն դրույթներին և նույնիսկ տրամագծորեն հակառակ լուծումներ են առաջարկում: Եվ բոլոր դեպքերում խորհրդարանը սրտատույզ համերաշխությամբ կողմ է քվեարկում օրինագծերին:

Մեկամյա օրենսդրական գործունեության „համախառն արդյունքը,, կարելի է բաժանել երկու խմբի՝ պայմանականորեն դրանք կոչելով «պրագմատիկ» և «իմիտացիոն»: Թեև պրագմատիզմի և իմիտացիայի տարրերը մի շարք դեպքերում հանդես են գալիս միաժամանակ, սակայն առաջին խմբի օրենքներն առանձնանում են գործնականությամբ, իրատեսական նպատակներով, շատ որոշակի խնդիրներ են լուծում՝ որոշակի /հաճախ կարճ/ ժամանակահատվածի համար: Թվարկենք մի քանիսը. հեռուստատեսության և ռադիոյի օրենքում սեպտեմբերյան փոփոխությունը, ակցիզային հարկին առնչվող երկու փոփոխությունները, Սևանա լճից ջրի բացթողումներն ավելացնելու հնարավորություն տվող երկու օրինագծերը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը, նույնիսկ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները

/ի դեպ, վերջինը հանգիստ կարելի է տեղավորել նաև երկրորդ խմբի օրենքների շարքում/:

Ինչպես դժվար չէ նկատել, խիստ գործնական նպատակներ հետապնդող այս նախաձեռնությունները վերաբերում են ամենատարբեր ոլորտների և իրենց բնույթով ավելի շատ նման են ժամանակավոր «նորմատիվ ակտերի»: Իսկ օրենքները, մեր խորին համոզմամբ, թեև դոգմաներ չեն և ենթակա են փոփոխությունների ու կատարելագործման, պետք է փոփոխվեն սկզբունքային մոտեցումների և ծրագրային հիմնավորումների համատեքստում միայն: Մինչդեռ այսրոպեական շահի, նպատակահարմարության ու կոալիցիոն պայմանավորվածությունների արդյունքում ծնունդ առած օրենքների հետևում շատ դժվար, երբեմն գրեթե անհնար է տրամաբանական, համոզիչ հիմնավորումներ, սկզբունքներ ու ծրագրեր գտնելը: Ի դեպ, խորհրդարանական փոքրաթիվ ընդդիմության ներկայացուցիչները, վերոնշյալ բոլոր դեպքերում, օրինագծերը ներկայացնողների կցկտուր և խճճված հիմնավորումներին ի պատասխան բարձրաձայնում էին հանրության մեջ շրջանառվող կարծիքները այդ նախաձեռնությունների իրական նպատակների ու շարժառիթների մասին, որոնք, ցավոք, շատ ավելի տրամաբանական և համոզիչ էին հնչում:

Փոքր-ինչ այլ պատկեր է գծագրվում «հմիտացիոն» խմբի օրենքների պարագայում: Այս դեպքերում կոալիցիոն համերաշխությունը հասնում է իր բարձրակետին՝ նախագիծը շրջանառության մեջ դնելուց մինչև օրենք դառնալու պահը ողջ գործընթացը ստանում է բացառապես ձևական, «հմիտացիոն» բնույթ: Ոչ մի առարկություն, ոչ մի լուրջ առաջարկություն, փոխարենը՝ խորին համոզվածության ցուցադրում, թե օրինագիծն «առնվազն մեկ քայլ առաջ է» տանում մեզ: Նկատենք նաև, որ այդպիսի առաջընթաց ապահովող օրինագծերը /«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի ապրիլյան «լրացումներն ու փոփոխությունները», ԱԺ կանոնակարգ օրենքում կատարված փոփոխությունները, որոնք կոչված էին մեծացնելու խորհրդարանական ընդդիմության լիազորությունները.../, որպես կանոն, շատ ծավալուն են և ունեն, մեղմ ասած, խճճված շարադրանք: Արտաքին այս էֆեկտի հետևում թաքնված է ծանոթ գուգահեռը, երբ նավակը ճոճելով փորձ է արվում շարժման տպավորություն ստեղծել: Խոստովանենք, որ մեր օրենսդիրներին հաջողվում էր եվրոպացի փորձագետների մոտ նման տպավորություն ստեղծել:

Այսպիսով, մեկ տարվա խորհրդարանական աշխատանքի արդյունքում մենք մի կողմից ունեցանք օրենքներ, որոնք կոնկրետ խնդիրներ ու շահեր էին հետապնդում և ոչ մի կապ չունեին օրենսդրական դաշտի կատարելագործման հետ, մյուս կողմից՝ օրենքներ, որոնք իրականում ոչինչ չէին փոխում, կոչված էին «սպասարկելու» Եվրախորհրդի պահանջները և նույնպես ոչ մի կապ չունեին օրենսդրական դաշտը կատարելագործելու հետ: